AZG NEW PDF.qxd 10/05/2010 21:42 Page 1

Ազգ Azg

11 ՄԱՅԻՍ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 85 (4465)

ISSN: 1829-1651

# Ռուս-թուրքական բարձրագույն մակարդակի համագործակցության խորհուրդն ու ԼՂ հարցը

## ՌԴ նախագահը այցելում է Թուրքիա

Հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ իրավիճակն ու ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման հարցը ամենայն հավանականությամբ այսօր Թուրքիա ժամանող Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հանդիպումների օրակարգի հիմնական բաղադրիչներից են:

Եռօրյա արեւելյան այցելությունները Սիրիայից երեկ երեկոյան մեկնարկած ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը այսօր երեկոյան արդեն կլինի Թուրքիայում՝ պաշտոնական այցի շրջանակներում հանդիպումներ ունենալով Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի եւ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:

Տես էջ 5

# Բիշքեկյան զինադադարը եւ Status quo-ի հարցը

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

1994-ի Բիշքեկյան կոչվող զինադադարից (իրականում զինադադարի մասին Ղրղզստանի մայրաքաղաքում սկսված բանակցությունները պայմանագրի կնքմամբ ավարտվեցին Մոսկվայում մայիսի 12-ին) անցել է 16 տարի: Այդ տարիները կարելի է անվանել «լարված խաղաղության» ժամանակաշրջան: Լարված, քանի որ զինադադարի պայմանագրին փոխարինելու չեկավ խաղաղության պայմանագիրը: Հետեւաբար, 16 տարվա հեռվից նայելով ղարաբաղյան խնդրի զարգացումներին, պետք է փորձենք հասկանալ, թե որն է պատճառը, որ մինչ օրս չի կնքվել խաղաղության պայմանագիրը, եւ մենք, փաստորեն, շարունակում ենք գտնվել պատերազմական շրջանում:

Ղարաբաղի ազատագրության համար սկսված պայքարը եւ ապա դրան հաջորդած ԽՍՀՄ-ի փլուզումը տարածաշրջանում որակական նոր փոփոխությունների հիմք դրեցին: Խորհրդային կայսրությունից դուրս եկած հանրապետությունները յուրովի էին փորձում լուծել ազգային հարցը իրենց երկրներում, ինչն էլ հանգեցրեց ռազմական բախումների ոչ միայն Ադրբեջանում, այլեւ ԱՊՀ մյուս երկրներում: Հատկապես ծանր էր Հայաստանի վիճակը, որին պարտադրված պատերազմը միաժամանակ ուղեկցվում էր շրջափակումով, ինչը հանգեցնում էր տնտեսական ծանր հետեւանքների: Օբյեկտիվ կամ սուբյեկտիվ այս փաստերին գումարած, իշխանության եկած ՀՀՇ-ի ապաշնորհ ղեկավարությունը վերջնականապես քայքայեց Հայաստանի տնտեսությունը: Իսկ 1992-ի մայիսին՝ Շուշիի ազատագրման նախօրեին, զինադադարի բանակցությունների համար Թեհրան մեկնած հայաստանյան պատվիրակության փաստը՝ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, հուշում էր, որ այդ պատերազմից լավ ելք չէր սպասում նաեւ մեր երկրի ղեկավարությունը, եւ օր առաջ խաղաղության՝ զինադադարի հաստատման պահանջ կար: Այսինքն, իշխանությունների կողմից չկար հավաս սեփական ժողովրդի եւ նրա անձնազոհության նկատմամբ: Համենայնդեպս, հաջողվեց ազատագրել Շուշին, իսկ հետագայում էլ՝ ջախջախել թշնամուն եւ նրան ստիպել կնքելու Բիշքեկյան զինադադարը:

Տես էջ 2

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ

# Հաղթանակն ամեն օր է, հաղթանակը յուրաքանչյուրինն է

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

**Հայրենական պատերազմի հաղթանակից անցել է 65 տարի, արցախյան հաղթանակից՝ 16: Երբ վերլուծում եւ փորձում ենք հասկանալ երկու պատերազմներում տարած հաղթանակների արժեքը, հասկանում ենք, որ երկուսում էլ կշեռքին են դրված եղել մի կողմից մի ամբողջ ժողովուրդ, նրա հավատը, սերը, նրա նպատակներն ու երազանքները, մյուս կողմից՝ բնաջնջումը, կործանումը, խավարը, ստրկությունն ու չարիքը: Կյանքի ու մահվան կռիվ են եղել երկուսն էլ, եւ երկուսում էլ հաղթել է կյանքը: Հետեւաբար երկու հաղթանակն էլ ապրում են յուրաքանչյուրիս տրտում, երկու հաղթանակների արժեքը մենք պետք է գիտակցենք ոչ թե միայն «մայիսի 9-երին», այլեւ ամեն օր, այդ յուրաքանչյուր օրվա համար մենք պարտական ենք նախ այն սերնդին, որը կիսատ թողնելով իր դպրոցական ավարտական երեկոն՝ մեկնեց ռազմաճակատ, եւ նրանց որդիներին, որոնք նոր ցեղասպանություն կանխեցին Արցախում:**

**Հավերժ փառք նրանց:**



**Մայիսի 7-ին Մոսկվայի տանը Ռուսաստանի հայերի միությունը կազմակերպել էր հուշ-երեկո՝ նվիրված Հայրենական պատերազմում տարած հաղթանակին: Եվ չնայած երիտասարդ սերնդի համար Հայրենական պատերազմը նույնքան «հին անցյալից է», որքան, օրինակ, Նապոլեոնի ժամանակները, սակայն երբ երիտասարդ սերունդը հիշում է, հասկանում եւ գնահատում է հաղթանակը, ապա այն իրոք անմահ է, նրա արժեքն իրոք տեսանելի է. հաղթանակն, անշուշտ, ապրում է յուրաքանչյուրիս տրտում, մենք պարտավոր ենք այն հիշել՝ հետագա հաղթանակների համար, մենք հենց դա էինք հիշում, երբ հաղթեցինք Արցախում:**

Տես էջ 3

# Ժակ Շիրակն ու Թուրքիան

**Ինչպես տեղեկացնում է Ֆրանսիայում հրատարակվող Les Nouvelles d'Armenie ամսագիրը, մայիսի 10-12-ը Թուրքիայում կլինի Ֆրանսիայի նախկին նախագահ Ժակ Շիրակը: Ստամբուլի Գալաթասարայ համալսարանը նրան կպարգեւատրի պատվավոր դոկտորի կոչումով: Մայիսի 11-ին Շիրակը հանդես կգա Գալաթասարայ համալսարանում, որտեղ կխոսի ֆրանս-թուրքական բարեկամության եւ իր անձնական համակրանքի մասին՝ թուրք ժողովրդի հանդեպ: Ֆրանսիայի նախկին նախագահին կհյուրընկալի Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը, Շիրակը Թուրքիայում կհանդիպի քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների հետ:**

**Հատկանշական է, որ երբ Ֆրանսիան 2001-ին ճանաչեց Հայոց ցեղասպանությունն ու նաեւ օրենսդրորեն դատապարտեց, այդ օրենքը ստորագրել էր Ֆրանսիայի այդ ժամանակվա նախագահ Ժակ Շիրակը: Ինչպես համոզվում ենք, թուրքական «նեղվածությունը» երկար կյանք չի ունենում, եթե 2001-ին Շիրակի ստորագրության պատճառով Թուրքիան հրաժարվեց Ֆրանսիայի հետ որոշ նախատեսված համատեղ ծրագրերից, բոյկոտեց ֆրանսիական ապրանքները (ո՞ւմ վնասելով - Հ. Ա.), ապա 9 տարի անց, չնայած Ֆրանսիան ամենեւին էլ չի փոխել իր կարծիքը պատմական արդարության վերականգնման գործում, թուրքական համալսարանը պարգեւատրում է «այն նույն» Շիրակին:**

Հ. Ա.

# Գազամատակարարումը դեռեւս վերականգնված չէ՞

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

«Հայռուսգազարդ» ընկերությունում մտածում են իրանական գազամուղի օգտագործման մասին: Եթե առաջիկա մի քանի օրերին Վրաստանը չսկսի գազամատակարարումը, ապա հայկական կողմը ստիպված կլինի օգտագործել իրանական գազը, որն ավելի թանկ է, քան Վրաստանի տարածքով մատակարարվող ռուսականը:

Վրաստանի տարածքում գազատարը վնասվել էր ապրիլի 28-ին: «Հայռուսգազարդ» ընկերության մամուլի քարտուղար **Շուշան Սարդարյանը** նշում է, որ ընկերության մասնագետները չեն հիշում նախադեպ, որ շուրջ երկու շաբաթ շարունակվեին վերականգնողական աշխատանքները: «Հանրապետությունում գազի օրական միջին սպառումը կազմում է 2.5 մլն խմ:

Տես էջ 2



# Հայաստանը՝ «Austrian Airlines Skyline»-ում

**Ավստրիական ավիաուղիների «Austrian Airlines Skyline» ամսագրում լույս է տեսել Հայաստանին նվիրված հատուկ հոդված: Հայաստանի ԱԳՆ-ի տեղեկացմամբ՝ մայիսի 10-ին Ավստրիայում Հայաստանի դեսպանության նախաձեռնությամբ եւ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ ու մասնակցությամբ «Austrian Airlines Skyline» ամսագրում լույս տեսած Հայաստանին նվիրված հատուկ հոդվածը ամսագրի այդ համարի հիմնականն է:**

**Գերմաներեն եւ անգլերեն տարբերակներ ունեցող հոդվածում ներկայացվում է Հայաստանը իր պատմական եւ մշակութային դիմապատկերով: Հայաստանը հոդվածում ներկայացված է որպես հարուստ պատմական, մշակութային եւ կրոնական ավանդույթներ ունեցող երկիր:**

Ա. Հ.

# Ադրբեջանի գյուղնախարարը Երեւանում է

Մայիսի 10-14-ը Երեւանում անցկացվող ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (FAO-ի) 27-րդ տարածաշրջանային կոնֆերանսին մասնակցելու նպատակով Երեւանում է գտնվում Ադրբեջանի գյուղատնտեսության նախարարի գլխավորած պատվիրակությունը: Կոնֆերանսին մասնակցում են նաեւ մի քանի տասնյակ այլ երկրների պատվիրակություններ:

Հ. Ա.

# Չավուշօղլուն Հայաստանում հանդիպումների խիտ օրակարգ ունի

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ, վեհաժողովում Թուրքիայի պատվիրակության նախկին ղեկավար Մովլութ Չավուշօղլուն այսօր ժամանում է Երեւան: ԵԽԽՎ պաշտոնական հաղորդագրության համաձայն, Չավուշօղլուն Հայաստան է գալիս երկօրյա այցով, որի ընթացքում հանդիպումներ կունենա Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի, արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի, Ազգային ժողովում ներկայացված խմբակցությունների ներկայացուցիչների եւ արտախորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների հետ:

Չավուշօղլուն կհանդիպի ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակության նախագահ Դավիթ Հարությունյանին, որը նաեւ ղեկավարում է Ազգային ժողովի պետաիրավական հարցերով հանձնաժողովը:

ԵԽԽՎ հաղորդագրության մեջ Հարությունյանի հետ հանդիպումը ներկայացվում է որպես հանդիպում 2008-ի մարտյան իրադարձությունների առնչությամբ ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի առաջարկությունների իրականացման մասով պատասխանատուի հետ: ԵԽԽՎ նախագահը քննարկումներ կունենա նաեւ մարդու իրավունքների պաշտպանի եւ դիվանագիտական հանրության ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Այցելության օրակարգի մասին որեւէ տեղեկություն պաշտոնապես չի հաղորդվում, սակայն Ադրբեջան ԵԽԽՎ նախագահի արդեն իսկ կատարած այցելությունից որոշ հարցերի քննարկումը Հայաստանում լրիվին սպասելի է:

Ամենայն հավանականությամբ, քննարկվելու են Հայաստան-ԵԽԽՎ համագործակցության հեռանկարները, հայ-թուրքական գործընթացը, նաեւ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը, որում, Թուրքիայի նմանօրինակ հավակնոտության թերեւս դրսեւորմամբ, Չավուշօղլուն ցանկանում է ակտիվ դերակատարում ունենալ:

Մասնավորապես, դեռեւս ապրիլի վերջին Ստրասբուրգում՝ վեհաժողովի նստաշրջանի շրջանակներում, ԵԽԽՎ նախագահը կամզակերպեց Հայաստանի եւ Ադրբեջանի պատվիրակությունների հանդիպում՝ ԼՂ հարցով ԵԽԽՎ ենթահանձնաժողովի աշխատանքներին կենդանություն հաղորդելու ցանկությամբ: Թերեւս որեւէ շահագրգռվածություն այս հարցում ԵԽԽՎ նախագահը չդրսեւորեր, եթե չլիներ նրա իսկ հայտարարությունը, թե ինքն էլ ցանկանում է ղեկավարել այդ ենթահանձնաժողովը:

Հիշեցնենք, որ ԼՂ հարցով ԵԽԽՎ նախկինում գործող ենթահանձնաժողովը ղեկավարում էր լորդ Ռասել Ջոնսթոնը, որի մահից հետո ենթահանձնաժողովի նախագահի թեկնածության հարցում դեռեւս համաձայնություն ձեռք չի բերվել հայկական եւ ադրբեջանական պատվիրակությունների միջեւ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Շուշին ներկայից անցյալ տանող ճշմարիտ ճանապարհ է

Մայիսի 9, երբ կարեւոր տոների նշանակությամբ, ոչ միայն արցախցիների, այլեւ ամբողջ հայության հաղթանակների տոնն է, թեպետ եռանշանակությամբ տոնվում է միայն Արցախում: Շուշիի ազատագրման հետ է կապվում ԼՂՀ պաշտպանության բանակի ստեղծումը, որովհետեւ այդ փայլուն ռազմագործողությունն իրականացվել է հայ ինքնապաշտպանական ջոկատների համատեղ գործողությամբ: Շուշին հօդս ցնդեցրեց Բաքվի այն պատրանքը, ըստ որի ադրբեջանական կանոնավոր բանակի դեմ կռվում են ֆիդայական ջոկատներ, որոնց հեշտ է ծնկի բերել: Հարեւան երկրում իրապես հասկացան, որ Ղարաբաղում շատ կարճ ժամանակում ձեւավորվել է կազմակերպված, կենտրոնացված հրամանատարությամբ գործող բանակ, որը պաշտպանվելուց բացի՝ ունակ է հարձակողական գործողություններ ձեռնարկել ու հաղթանակել:

Այսօր էլ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարը վստահեցնում է, որ ղարաբաղյան զինված ուժերը պատրաստ են հարկ եղած դեպքում ռազմական գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածք: Հաղթանակած զորականի այս վստահեցումը հենց այնպես չի արվում. զինադադարի անցած ժամանակահատվածում ազերի ասկյարները բազմիցս փորձել են ստուգել սահմանը հսկող հայ մարտիկների զգոնությունը, եւ արդյունքները մեզ քաջ հայտնի են: Գոնե, շփման գոտու ադրբեջանական հատվածում հերթապահողները լավ գիտեն, թե ինչ է նշանակում խախտել սահմանային անդորրը: Բնականաբար, նրանք նաեւ հրաշալի պատկերացնում են պատերազմական լայնածավալ գործողություններ հրահրելու հնարավոր ծանր հետեւանքները հենց իրենց համար: Փոխարենը, արտիստիկ հայրենասիրությամբ «փայլում» են տաքուկ աշխատասենյակներում պատսպարված նրանց պետական գործիչները, որպիսին, ասենք, Ռուսաստանի Դաշնությունում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուլբյուլօղլին է: Վերջինս, իր նստավայրում, Մեծ հայրենականի իր ազգակից վետերանների հետ հանդիպման ժամանակ հերթական անգամ հանդես է եկել ռազմատենչ հայտարարությամբ: Եվ դա արել է, ոչ ավել, ոչ պակաս՝ Շուշիի ազատագրման օրը: Երգահան-դիվանագետը վերստին խոսել է Ղարաբաղում նոր պատերազմ սկսվելու հավանականության մասին եւ կոչ է արել պատրաստ լինել դրան, քանզի «եկել է լեռնայինղարաբաղյան կոնֆլիկտը կարգավորելու ժամանակը»:

Անշուշտ, ղարաբաղյան հակամարտության լուծումներում բացառելի չէ ռազմագործողությունների վերսկսումը, սակայն հազիվ թե դա կարող է տեղի ունենալ սին ռազմակոչերի ոգեւորվածությամբ: ԼՂՀ-ն եւս պատերազմի հետեւանքով տարածքներ է կորցրել ի դեմս Շահումյանի շրջանի ու Մարտակերտի եւ Մարտունու որոշ բնակավայրերի, բայց ոչ մի անգամ հայ դիվանագետներն ու զինվորական ղեկավարները չեն հոխորտացել այդ տարածքները ուժով հետ բերելու մասին: Ողջախոհությունը հուշում է միայն խաղաղ լուծում՝ բանակցությունների միջոցով եւ իրականությունը ճիշտ գնահատելու հրամանականով, իսկ պատերազմի ճառաբանությունն ընդամենը սեփական անզորությունը քողարկելու միջոց է:

Ամենայն հավանականությամբ, Ադրբեջանում էլ նույնպես դիտել են Եռատոնի արցախյան տոնակատարության հեռարձակումները հեռուստատեսությամբ: Եվ, թվում է, պիտի որ հետեւություն անեն այն բանի պարզ գիտակցումով, որ հաղթանակի խանդավառությունը արցախցիների եւ աշխարհասփյուռ հայության համար սոսկ սեփական անցյալի գնահատում չէ, այն նաեւ ներկայից դեպի ապագա տանող ուղեցույց-ճանապարհ է, որով անխոտոր ընթանալու միշտ պատրաստ են բոլոր սերնդի հայերը՝ մեծից-փոքր:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# Բիշքեկյան զինադադարը եւ Status quo-ի հարցը

*1-ին էջից*

**Ինչեւէ, տեղի ունեցած հայտնի իրադարձությունների մասին հերթական շարադրանքի նպատակն է հիշեցնել, որ պատերազմում մենք հաղթել ենք, չնայած պատերազմի ողջ ընթացքում հակառակորդին զիջում էինք թե՛ տեխնիկայով, թե՛ մարդկային ռեսուրսներով եւ թե՛ պարենային ապահովությամբ: Եթե որեւիցե մեկը թերթի այն ժամանակվա միջազգային մամուլը, ապա կտեսնի, որ հայկական կողմի հաղթանակին քչերն էին հավատում, սակայն ողջ պարադոքսն այն էր, որ դրան չէր հավատում նաեւ մեր երկրի ղեկավարությունը: Այսինքն՝ հաղթանակը կերտվեց հայ զինվորի ոգու տոկունության եւ հայրենիքին նվիրված մարտիկների արյան գնով: Հետեւաբար ներկայումս գործող Status quo-ն ոչ միայն Հայաստանի, այլեւ տարածաշրջանի համար ունի ռազմավարական նշանակություն, այսինքն՝ խաղաղության պահպանման միակ գրավականն է: Status quo-ի փոփոխությունը կամ նմանատիպ փորձերը կհանգեցնեն ռազմական նոր բախումների՝ դրա բոլոր հետեւանքներով: Այսինքն՝ ժամանակն է, որ երկրի իշխանությունները հավատան սեփական ժողովրդին, հայտարարեն ազատագրված տարածքների պահպանման եւ բնակեցման մասին, ինչը կայուն խաղաղություն ու զարգացում կբերի Հայաստանի Հանրապետությանը եւ ԼՂՀ-ին:**

# Աշխատաշուկայում նկատվում է գործազրկության մակարդակի կայունացում

Երեկ «Հենարան» ակումբում՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ **Սոնա Հարությունյանը** խոսեց «Աշխատաշուկան եւ գործազրկության տեմպերը» թեմայով:

Ըստ բանախոսի՝ աշխատաշուկայում արդեն նկատվում են լարվածության մեղմացում եւ գործազրկության մակարդակի կայունացում: Այս տարվա մարտի 1-ի դրությամբ՝ գործազրկության մակարդակը կազմել է 7,3 տոկոս, այս թիվը շարունակաբար պահպանվել է ե՛ւ ապրիլի 1-ի, ե՛ւ մայիսի 1-ի դրությամբ:

«Նախկինում գործազուրկների եւ աշխատանք փնտրողների թիվը պրոգրեսիվ կերպով աճում էր, իսկ այժմ կայունացել է, ինչն առաջին հերթին պայմանավորված է տնտեսության որոշակի աճով եւ կայունությամբ, ինչպես նաեւ աճել է աշխատանքի տեղավորվածների եւ զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվածների թիվը: Եթե նախորդ տարի՝ մայիսի մեկի դրությամբ, ունեինք շուրջ 2774 աշխատանքի տեղավորված, ապա այս պահին ունենք 3500-ից ավելի աշխատանքի տեղավորվածներ, ինչը նշանակում է, որ ավելացել են աշխատատեղերը», տեղեկացրեց Սոնա Հարությունյանը:

2010-ի մայիսի 1-ի դրությամբ աշխատանք փնտրողների թիվը կազմել է 102.8 հազար, որը նախորդ տարվա նույն ժամանակի նկատմամբ աճել է 1,6 տոկոսով (101,2 հազար մարդ), իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 2,6 տոկոսով (100,2 հազար մարդ): Գործազուրկների թիվը կազմում է աշխատանք փնտրողների 82,8 տոկոսը կամ 85,1 հազար մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակի համեմատությամբ աճել է 4,8 տոկոսով (81,2 հազ. մարդ), իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 0,2 տոկոսով (84,9 հազ. մարդ):



Ապրիլ ամսվա ընթացքում գործակալություն է ներկայացվել 1495 թափուր աշխատատեղ, որը նախորդ ամսվա համեմատությամբ աճել է 20,9 տոկոսով: Թափուր աշխատատեղերը նախատեսված են եղել բժիշկների, գանձապահների, շուկայագետների, խոհարարների, վարորդների, կարողների, վաճառողների, էլեկտրիկների, փականագործների եւ մի շարք բանվորական մասնագիտությունների համար:

«Անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրով տարեսկզբից աշխատանքի է տեղավորվել 73 աշխատանք փնտրող, որից 28-ը եղել են հաշմանդամներ: «Մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագրում ընդգրկվել են 336 գործազուրկ, 15 հաշմանդամ եւ այլն:

«Եթե ասեք, որ գործազուրկների թիվը շատ ավելին է, քան պաշտոնական տվյալներն են, ես կհամաձայնեմ: Դեկտեմբերին մենք իրականացրել ենք նաեւ տնային տնտեսությունների հետազոտություն, որը տպագրվել է 3 լեզուներով: Այս հետազոտության արդյունքներով՝ գործազրկության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում կազմում է 27,5 տոկոս», տեղեկացրեց Սոնա Հարությունյանը:

Աշխատաշուկային շարունակում է բնորոշ մնալ բանվորական մասնագիտությունների գծով մեծ պահանջարկը՝ հատկապես Երեւանում, սակայն մարզերում շարունակում են պահանջված մնալ բժիշկների, դեղագործների ու մանկավարժների մասնագիտությունները:

«Գործազուրկների մեջ գերակշռում են 31-50 տարեկան մարդիկ: Գործազուրկների 69,9 տոկոսը կազմում են կանայք, արդեն 20 տոկոսից ավելի են կազմում երիտասարդները, իսկ կրթական մակարդակով՝ շուրջ 14 տոկոսն ունեն բարձրագույն կրթություն, շուրջ 25 տոկոսը՝ միջին մասնագիտական, իսկ 52 տոկոսը՝ միջնակարգ», հավելեց Սոնա Հարությունյանը:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ժողովուրդն ինքը պիտի ընտրի իր ուղին

**Մայիսի 9-ի առթիվ հարցազրույց տալով «Վեստի 24» հեռուստաընկերությանը՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ասել էր. «Հաղթանակի օրը լուսավոր տոն է, ես պատկանում եմ հետպատերազմյան սերնդին, որն անմիջականորեն չի զգացել պատերազմի դառնությունը, սակայն իմ մանկությունն անցել է այն տարիներին, երբ թարմ էին վերքերը, երբ շատ էին սեւազգեստ կանայք, երբ ողջ ու առողջ էին իսկական հերոսները, դրանք այն տարիներն էին, երբ իմ փոքր հայրենիքում՝ Լեռնային Ղարաբաղում արագ տեմպերով կառուցվում էին Մեծ հայրենականում զոհվածներին նվիրված հուշակոթողներ: Տարին մի քանի անգամ այցելում էի զոհված ղարաբաղցիների հուշարձանին, հանդիպում էի վետերանների հետ եւ այնտեղ առաջին անգամ ես հասկացա, որ պետք է պաշտպանել հայրենիքը, որ հայրենիքի պաշտպանությունը նշանակում է պաշտպանել ընտանիքդ, արժանապատվությունդ, երեխաներիդ ապագան, որ, ցավոք սրտի, այդ պաշտպանությունը զոհեր է պահանջում: Եվ հենց այդտեղ առաջին անգամ, հարցեր առաջացան, թե ինչո՞ւ են մարդիկ կռվում միմյանց դեմ, ինչո՞ւ են նույն ժողովրդի զավակները նույն ժողովրդին տրամադրում մյուսների դեմ, ինչպե՞ս է լինում, որ կատարվում են այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են էթնիկ զտումները, ցեղասպանությունները: Այդ պատճառով մայիսի 9 ինձ համար ե՛ւ տոն է, ե՛ւ անցյալի մասին մտորումների օր»: Նախագահը նաեւ ասել է. «Հայաստանը զգալի ներդրում է ունեցել հաղթանակի գործում, հայերի շատ սերունդներ են դաստիարակվել Խորհրդային Միության 119 հերոսների եւ փառքի 3-րդ աստիճանի 27 ասպետների օրինակով: Պատահական չէ, որ իմ այցը Մոսկվա սկսել եմ հայ ժողովրդի հանրահայտ զորավարներ Բաղրամյանի, Բաբաջանյանի, Խուդյակովի եւ ծովակալ Իսակովի շիրիմներին ծաղկեպսակ դնելով: Այդ մեծ պատերազմին մասնակցել է հայերի այն սերունդը, որն իր մաշկի վրա էր զգացել Հայոց ցեղասպանության անմարդկային դաժանությունները», ընդգծել է նախագահը:**

**«Վեստի 24» հեռուստաընկերության լրագրողի այն հարցին, թե ի՞նչ պետք է անեն այսօրվա առաջնորդները, որպեսզի արյունահեղությունները չկրկնվեն, ՀՀ նախագահը պատասխանել է. «Հիշել, որ մարդկանց էթնիկ կամ ռասայական խմբերի բաժանումը հանգեցնում է վաս հետեւանքների: Սեփական բարեկեցությունը չի կարելի կառուցել ուրիշների վշտի վրա, հիշել որ, յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի ապրելու եւ զարգանալու այնտեղ, որտեղ ապրել է հազարամյակներով, յուրաքանչյուր ժողովուրդ ինքը պետք է ընտրի այն ուղին, որով ցանկանում է առաջ ընթանալ», եզրափակել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:**

**Մ. Խ.**

# Գազամատակարարումը դեռեւս վերականգնված չէ՞

*1-ին էջից*

Առայժմ մենք կարողանում ենք այդ պահանջը բավարարել Աբովյանի գազապահեստարանի պաշարների հաշվին: Ֆորսմաժորային իրավիճակում կարող ենք օգտագործել նաեւ իրանական գազամուղի հնարավորությունը», ասաց Շուշան Սարդարյանը:

Մայիսի 7-ին վրացական կողմը տեղեկացրել էր, որ փորձարկումներից հետո պարզ կլինի, թե երբ կսկսվի գազամատակարարումը: Սակայն Շուշան Սարդարյանը նկատում է, որ որեւէ հայտարարությամբ վրացական կողմը հանդես չի եկել, միայն հայտնի է դարձել, որ հայտնաբերվել են նոր վնասվածքներ: Քաղաքագետ Սերգեյ Մինասյանը Վրաստանի կողմից գազամատակարարման վերսկսման հետաձգումը կանխամտածված չի համարում: Ասում է՝ հնարավոր է, որ վերականգնումը ուշանա բնակլիմայական պայմանների պատճառով: «Եթե առաջիկա մի շաբաթվա ընթացքում գազամատակարարումը չվերականգնվի, ապա կարելի է ենթադրություններ անել եւ մտածել խնդրի լուծման այլ միջոցների մասին», ասաց **Սերգեյ Մինասյանը**:

Քաղաքագետ **Սերգեյ Շաքարյանցը** Վրաստանի կողմից գազամատակարարման վերականգնման ուշացման մեջ կանխամտածված միտում չի տեսնում, բայց կասկածում է: «Փաստեր չունենք, որ Վրաստանը հատուկ է ձգձգում, բայց հետաքրքրական է, որ համընկավ Ռուսաստանի եւ Թուրքիայի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ էներգետիկ պայմանավորվածությունների ձեռքբերման հետ, որոնցից դուրս է մնում Վրաստանը: Գուցե այս կերպ Վրաստանը փորձում է ցույց տալ եւ կարեւորել իր տարածքի աշխարհագրական դիրքն ու նշանակությունը», կարծում է Սերգեյ Շաքարյանցը:

Որ գազը միշտ էլ եղել է քաղաքական գործոն, չեն ժխտում նաեւ տնտեսագետները: «Հայռուսգազարդն ունի գազամատակարարման հստակ մշակված ռեժիմ: Եթե գազամատակարարման լուրջ խնդիր ծագի, ապա ընկերությունն ստիպված կլինի գնալ ռեժիմի փոփոխության եւ կրճատել կամ բնակչությանը, կամ էլ տնտեսությանը մատակարարվող գազի ծավալները, որից կբխեն սոցիալական եւ տնտեսական հետեւանքներ», նկատում է տնտեսագետ **Սամվել Ավագյանը**:

Երեկ, «Նյուզ.ամ» կայքի փոխանցմամբ, վրացական կողմն, այնուամենայնիվ, վերականգնել է գազամատակարարումը: Գործակալությանն այդ մասին տեղյակ էին պահել Վրաստանի Նավթի եւ գազի ընկերությունից, սակայն «Հայռուսգազարդի» մամլո խոսնակ Շուշան Սարդարյանը եւս մեկ անգամ նշեց, որ Հայաստան գազ չի մտնում: «Գազատարի վերականգնման պարագայում, կասեցված մատակարարումը երկար գործընթաց է, մի քանի ժամ կտեւի, մինչեւ գազը մտնի Հայաստան», նշեց Սարդարյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

| | |
|---|---|
| Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ | / հեռ 521635 |
| Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ | / հեռ 529221 |
| Հաշվապահութիւն (գովազդ) | / հեռ 582960 |
| Լրագրողների սենեակ | / հեռ 581841 |
| Համակարգչ. ծառայութիւն | / հեռ 582483 |
| *Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* | / հեռ 529353 |

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 10/05/2010 21:18 Page 1





# Կֆինանսավորվեն միայն գաղափարներ ներկայացրած գիտնականները

Կրթության եւ գիտության նախարարության, գիտության պետական կոմիտեի (Գիտպետկոմ) նախաձեռնությամբ մայիսի 6-9 Ջերմուկում տեղի ունեցավ «Գիտության զարգացման հիմնահարցերը» խորագրով գիտաժողով: Նպատակն էր` քննարկել գիտության ոլորտի զարգացման հիմնախնդիրներն ու հեռանկարները: Քննարկվող հարցերից մեկն էլ ֆինանսավորման նոր կարգերն ու դրույթներն էին: Նախատեսվում է գիտության ոլորտում ֆինանսավորում իրականացնել երեք ուղղությամբ` բազային, պայմանագրային կամ թեմատիկ եւ պետական նպատակային-ծրագրային: (Ֆինանսավորման նոր կարգերը **«Ազգը»** ներկայացրել էր նախորդ համարում) ֆինանսավորումը պետք է իրականացվի մրցութային կարգով: Ստեղծվելու է անկախ փորձագիտական խումբ:

«Գաղափարն այն է, որ ծրագրերը մրցութային կարգով ֆինանսավորվեն: Եթե ուզում ես փող ստանալ, պետք է գաղափար ներկայացնես, ապացուցես, որ գաղափարը տալու է լավ արդյունքներ: Ինչո՞ւ պետք է մի ինստիտուտ, որ հզոր մեջք ունի, ֆինանսավորվի, իսկ մյուսը, որը շատ ավելի լավ ծրագիր է ներկայացրել, բայց մեջքն ավելի թույլ է, չֆինանսավորվի: Ով շահում է` նա էլ ֆինանսավորվում է», ասաց Գիտպետկոմի ղեկավար **Սամվել Հարությունյանը**:

Անկախ փորձագետների խմբում ընդգրկված է 1200 մարդ: Նրանք ակտիվ գիտնականներ են, որ վերջին 5 տարվա ընթացքում տարբերաբար հոդվածներ են տպագրել: Անկախ փորձագիտական խմբի անաչառ գործունեության կապակցությամբ Հարությունյանն ասաց, որ մշակվել են հստակ դրույթներ:

«Կազմում ենք տվյալ ոլորտում գիտնականների ցուցակը: Թեմա ներկայացնող գիտնականի հետ համատեղ հոդվածներ հրատարակած, վերջին 5 տարվա ընթացքում նույն լաբորատորիայում աշխատած գիտնականները կազմից դուրս են գալիս: Ցուցակում կմնան 5-6 հոգի: Համակարգիչը պատահականության սկզբունքով կընտրի նրանցից երկուսին»:

Ֆինանսավորման նոր կարգերի կապակցությամբ նախատեսվում է կրճատել թեմատիկ թեմաների թիվը` 700-ից հասցնել 150-ի: Գիտպետկոմի ղեկավարը նկատում է, որ թեմատիկ ծրագրով տարեկան ֆինանսավորվում է 711 թեմա: «Այդքան օրիգինալ թեմա Հայաստանում հնարավոր չէ գտնել: Թեմաների գերակշռող մեծամասնությունը բազայինի կրկնությունն է: Ստացվում է, որ պետությունը նույն բանի համար կրկնակի է վճարում: Որոշեցինք թեմատիկ ծրագրերը վերածել գրանտայինի: Մեր գնահատմամբ` երկրում հնարավոր է տարեկան 130 օրիգինալ ծրագիր իրականացնել: Հետեւաբար պետք է այդքան թեմա էլ ֆինանսավորվի: Դրանցից 100-ը կլինեն պետական գրանտային, մնացածը` երիտասարդական գրանտային ծրագրեր` միջազգային համաֆինանսավորմամբ»: Հարությունյանը տեղեկացրեց, որ այդ նպատակով պատրաստվում են պայմանագրեր կնքել Իտալիայի եւ Չինաստանի հետ: Համագործակցության պայմանագրեր են կնքվել Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հետ: Ֆինանսավորման նոր կարգերի եւ փոփոխությունների կապակցությամբ **«Ազգի»** հետ զրույցում գիտաժողովի մասնակից գիտնականները ներկայացրին իրենց մտահոգություններն ու դժգոհությունները:

Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի ղեկավար **Համլետ Նավասարդյանի** կարծիքով, պետք է առաջնահերթ փոխել գիտության ոլորտում պասկերը եւ այնտեղ ներգրավել երիտասարդներին: «Այն, ինչ ասացին, շատ կարեւոր է, բայց դա չի ապահովի ռադիկալ փոփոխություններ: Գիտության ոլորտում միջին աշխատավարձը երկու անգամ ցածր է, քան այլ ոլորտներում: Այս փոփոխություններն ի՞նչ կբերեն: 50.000 դրամ կազմող աշխատավարձը կդառնա` 60.000: Ի՞նչ եք կարծում, 60.000 դրամ աշխատավարձ ստացող երիտասարդ գիտնականը կարո՞ղ է զբաղվել գիտությամբ: Կան գրանտներ տարբեր երկրներից, բայց դա ժամանակավոր է, եւ չի կարող ապահովել զարգացում: Պետք է կառուցվածքային փոփոխություններ կատարել», ասաց նա:

Կենսաբանական գիտությունների թեկնածու, մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի փոխտնօրեն **Արսեն Առաքելյանն** էլ դժգոհ է, որ ֆինանսական ծրագիր ներկայացնելու ընթացքում թվային ցուցանիշների մասին չխոսվեց: «Թվային ցուցանիշների բացակայությունը ներկայացվածի ամենամեծ թերությունն էր: Այդ ժամանակ պարզ կդառնար` արդյոք ֆինանսական նոր ռազմավարությունը կգոյատեւի՞»: Թեմաների կրճատման գաղափարը Առաքելյանը համարում է իրատեսական: «Թեմատիկին տրամադրվող ֆինանսավորումը բավարար արդյունք չէր տալիս: Արդյունքի տեսակետից այսպես ավելի ճիշտ կլինի, բայց հարց է ծագում` մարդիկ, որ թեմատիկ մասով դուրս են մնացել` ի՞նչ են անելու: Ինչպե՞ս են բաշխվելու գումարները: Սա նույնպես խնդիր է: Ելույթից հասկացա, որ գիտնականը պետք է ընտրություն կատարի` թեմատիկ, թե բազային: Բայց գիտնականը պետք է միանգամից մի քանի գործով զբաղվի եւ մի քանի ուղղությամբ աշխատի»:

Առաքելյանը նկատում է, որ անկախ փորձագիտական համակարգը լավ գաղափար է, սակայն մտավախություն ունի, թե հնարավոր կլինի՞ կյանքի կոչել: «Անհասկանալի են փորձագետների ընտրման չափանիշները: Կարո՞ղ է կամայական ինչ-որ մեկը դիմել, խնդրելով ընդգրկել իրեն փորձագիտական խմբի մեջ, թե՞ նրան են հրավեր ուղարկում: Այս հարցերը նույնպես բաց մնացին», ասաց նա:



*Գիտպետկոմի աշխատակազմի ղեկավար Կարեն Հայրապետյան, Գիտպետկոմի ղեկավար Սամվել Հարությունյան, ԿԳ փոխնախարար Մանուկ Մկրտչյան*

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ջերմուկ-Երեւան



# Հաղթանակն ամեն օր է, հաղթանակը յուրաքանչյուրինն է

*1-ին էջից*

**Դպրոցական ավարտական երեկո, նոր կյանքի սկիզբ, երիտասարդական երազանքներ, նպատակներ. 65 տարի առաջ հունիսի 22-ին այս ամենը կիսատ մնաց. «Ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Սովետական Միության վրա»: Մի ամբողջ անծայրածիր երկիր, ռուսը, հայը, ուկրաինացին, բելոռուսը, տաջիկն ու ուզբեկը պայքարի ելան` համախմբված, միասնական` հանուն իրենց կիսատ մնացած երազանքների, հանուն իրենց նոր կյանքի ու հանուն մեծ ընդհանուր հայրենիքի: Մայրերը, քույրերը, աղջիկները ռազմաճակատ էին ուղեկցում իրենց տղամարդկանց, եղբայրներին ու որդիներին` պատերազմը սուրբ գործի համար էր, պատերազմը` փրկության միակ ճանապարհն էր: Եվ գնացին տղաները. երիտասարդ, ապահով, խաղաղ կյանքի փոխարեն, նրանց պարտադրվեց ռազմի` արյունոտ, մահառումներով լի ճանապարհը, գնացին տղաները, որովհետեւ չկար այլընտրանք, գնացին տղաները` իրենց սրտում պահելով իրենց տունն ու քաղաքը, իրենց ընտանիքն ու հարազատներին. իրենց հայրենիքը: Դաշտային փողոցներում, թաց աչքերով, բայց հպարտ, թախիծը սրտում, բայց հույսով, նրանց ճանապարհ էին դնում կանայք միայն մեկ նշանաբանով` «Վերադարձեք»:**

**26 տարի էր անցել 1915-ից. հյուծված ու բազմադարյան տառապանքի միջով անցած հայը նոր կռվի ելավ, նոր բնաջնջում կանխելու: Համաշխարհային պատերազմում կռվում էին հայ շարքային զինվորներ ու գեներալներ, դիվիզիաների ու կորպուսների հրամանատարներ: Սովետական Միության հերոսներ դարձան մարշալներ Հովհաննես Բաղրամյանը, Համազասպ Բաբաջանյանը, Սերգեյ Խուդյակովը, ադմիրալ Իսակովը, սովետական լեգենդար ավիակոնստրուկտոր Արտեմ Միկոյանը, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը, ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը, Հունան Ավետիսյանը: Ընդհանուր առմամբ հայ ժողովուրդը ունեցավ ԽՍՀՄ 106 հերոսներ, որոնց բոլորի անունները հայտնվեցին Մոսկվայի տան դահլիճի էկրանին. նրանցից յուրաքանչյուրի ներդրումը աննկարագրելի է բառով Հաղթանակում:**

**Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան մարտնչում էր Կուբանում: Դիվիզիայի հաղթուղին ձգվում է Կուբանից մինչեւ Բրատիսլավա եւ Պրահա, հայկական զորամիավորումը մասնակցել է ավելի քան 30 քաղաքների եւ 1800 բնակավայրերի ազատագրմանը: Ռազմաճակատում էին նաեւ հայ զինվորականների հրամանատարությամբ գործող 76-րդ դիվիզիան (Կ. Վորոշիլովի անվան), 408-րդը, 89-րդը, 390-րդը եւ 261-րդը: Բազմաթիվ հայեր կռվում էին 31-րդ, 61-րդ եւ 320-րդ հրաձգային դիվիզիաների կազմում, 28-րդ եւ 38-րդ պահեստային բրիգադներում եւ ստորաբաժանումներում: Բոլորիս է հայտնի, որ Բեռլինի ազատագրմանը մասնակցել է նաեւ հայկական 89-րդ դիվիզիան` գեներալ Նվեր Սաֆարյանի գլխավորությամբ: Կովկասից մինչեւ Բեռլին` 7500 կմ, 9 հազար ոչնչացված եւ 11 հազար գերեվարված «հիտլերականներ», ահա Թամանյան դիվիզիայի փառապանծ մարտական ուղու ամփոփ նկարագիրը:**

**«Հայ ժողովուրդը, Ցեղասպանության սարսափների միջով անցնելով, քաջ գիտակցում էր, թե ինչ կլինի, եթե ֆաշիզմը պարտության չմատնվեր... ու կանգնեցին նրանք` Բրեստից մինչեւ Ստալինգրադ, Կուրսկում եւ շրջափակված Լենինգրադում: Կանգնեցին ու պաշտպանեցին իրենց տունը, իրենց հողը, իրենց երկիրը», հայ երիտասարդ սերնդի հնչեցրած այս խոսքերը եւս մեկ անգամ ապացուցում են` հաղթանակը գիտակցված է եւ անմոռաց:**

**«Սպասիր ինձ, եւ ես կգամ, միայն շատ սպասիր...Քո սպասումով դու ինձ փրկում ես ասես կրակից... թե ինչպես ես ողջ մնացի` կիմանանք միայն ես եւ դու. պարզապես դու կարողացար սպասել` ինչպես էլ ոչ ոք», ռազմաճակատից տուն ուղարկված գրեթե բոլոր նամակներն այսպիսին էին. իսկ տանը միայն այն միտքը, որ ՆԱ կենդանի է, արդեն տալիս էր «շատ սպասելու» նոր ուժեր:**

**Ու ՆԱ վերադարձավ. 65 տարի առաջ` մայիսի 9-ին երջանկությունը հաղթեց տառապանքին, հաղթեց ու նաեւ ցույց տվեց հետագա հաղթանակների ճանապարհը, դրանց հասնելու միակ ձեւը` միասնություն, կամք, հավատ, սեր:**

**Հայրենական պատերազմի զինվորի որդին կռվեց ու հաղթեց Արցախում` նույն ճանապարհին հետեւելով:**

**Մենք հիշում ենք այն զինվորներին, որոնք լքեցին իրենց տներն ու, հազարավոր կիլոմետրեր անցնելով, գնացին ռազմաճակատ ու հաղթեցին: Մենք հիշում ենք այն զինվորներին, որվքեր պարգեւատրվեցին ու դարձան հսկա երկրի, ողջ մարդկության հերոսներ: Մենք հիշում ենք այն բազմաթիվ հերոս զինվորներին, որոնք գնացին ու...չվերադարձան: Մենք հիշում ենք այն կանանց ու աղջիկներին, որոնք սպասում էին, որոնք հավատում էին, որոնք փոխարինում էին տղամարդկանց գործարաններում եւ ֆաբրիկաներում, որոնք պարում էին` հանուն Հաղթանակի: Մենք հիշում ենք, որ «այդ ժամանակ» զինվոր էին բոլորը` մի ամբողջ երկիր:**

**Հիշում ենք նաեւ, որ Բեռլինի «մայիսինյան» հայկական քոչարին նույն ուժգնությամբ ու նույն երջանկությամբ պարեցինք Շուշիում: Մենք հիշում ենք Արցախի հերոսամարտի բոլոր մասնակիցներին ու հերոսներին. Ոչ ոք եւ ոչինչ չի մոռացվել եւ չի մոռացվի, հակառակ պարագայում «մայիսներ» այլեւս չենք ունենա:**

**Հավերժ փառք «այդքան իրար նման» երկու պատերազմների հերոսներին ու բոլոր մասնակիցներին:**

**Մենք չենք մոռանա:**



# Վրաց տեղական ընտրությունները` բռնությունների պատճառ

Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ ջավախահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանի նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ, որի մասին **«Ազգը»** արդեն տեղեկացրել է:

«2010-ի ապրիլի 30-ին Վահագն Չախալյանի նկատմամբ բռնություն է գործադրվել Վրաստանի Ռուսթավի քրեակատարողական հիմնարկի պահակախմբի կողմից: Ընտանիքի անդամների հետ ջավախահայ քաղաքական գործչի տեսակցությունից հետո, երբ նրան ուղեկցում էին բանտախուց, պահակախմբի աշխատակիցները հարձակվեցին նրա վրա` հարվածներ հասցնելով իրանին եւ դեմքին», նշվում է հայտարարությունում:

Սա երկրորդ անգամ է, երբ Վահագն Չախալյանի նկատմամբ բռնություն է գործադրվում վրացական բանտում: Առաջին դեպքը տեղի է ունեցել 2009 թ. ապրիլի 16-ին Թբիլիսիի Գլդանի քրեակատարողական հիմնարկում: Դրանից երկու օր առաջ` ապրիլի 14-ին, Փարիզում Վրաստանի դեսպանատան առջեւ Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը ցույց էր անցկացրել ի պաշտպանություն Վահագն Չախալյանի:

**«Ազգը»** կարծիք էր հայտնել, որ Չախալյանի հետ տեղի ունեցած միջադեպը կապված է մայիսի 30-ին Վրաստանում կայանալիք տեղական ընտրությունների հետ, ինչի մասին, արդեն ստույգ տեղեկությունների հիմքով, հայտարարել է նաեւ Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը:

Խորհուրդը խստորեն դատապարտելով տեղի ունեցածը` կոչ է անում միջազգային կազմակերպություններին համապատասխան գնահատական տալ «վրացական իշխանությունների այս խայտառակ քայլին, որով նրանք հերթական անգամ ցինիկաբար ոտնահարում են կտսանքների եւ եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման ուղղությամբ իրենց ստանձնած բոլոր միջազգային պարտավորությունները»:

Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը վերահաստատում է Վահագն Չախալյանի ազատ արձակման համար պայքարելու իր վճռականությունը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 10/05/2010 21:18 Page 1



ԱԶԳ

**Իրավիճակ**

*Շիրակ. գյուղական ուրվագծեր*

# Ալվարը՝ դժվար վերածննդի ոգորումներում

Ցեղասպան թուրքի մեղքով մեր պատկերացման մեջ գաղթ հասկացությունն արմատավորվել է որպես զուտ հայ կյանքի երեւույթ: Քսաներորդ դարի վերջին տասնամյակի շեմին Շիրակի Ամասիայի շրջանի գյուղերի մեծ մասից տեղի ունեցած զանգվածային գաղթը մեր պատմության մեջ այն եզակի դեպքերից է, երբ հայի հողից գաղթողը ոչ թե տանտեր հայն էր, այլ եկվոր թրքացեղ տարրը, տվյալ պարագայում՝ ադրբեջանցի կոչվող ժողովրդի ներկայացուցիչները: Նրանք այստեղ բնակվում էին ողջ գյուղերով, ըստ Շիրակի մարզպետարանի կայքէջի տեղեկությունների՝ արդեն երեք հարյուր տարի: Իրենց հայրենակիցների իրականացրած արյունոտ ու հրեշավոր սումգայիթներից հետո այլեւս մեր հողն այրվեց նրանց ոտքերի տակ, ու նրանք մինչեւ վերջին մարդը քաշվեցին-գնացին:

Այս գյուղերի շարունակվող արդեն նոր կենսագրության սկիզբը 88-ի մեծ ավերներ պատճառած երկրաշարժից հետո վերականգնման, հայ բնակչությամբ վերաբնակեցման քայլերն էին, բնակավայրերի անունների վերահայացումը:

Ալվարը այդ բնակավայրերից մեկն է:

Գյուղի այս անվան ծագման մասին տեղի միջնակարգ դպրոցի տնօրեն **Ռուբիկ Համբարյանն** ասում է, որ Ալվար անունով գյուղ եղել է Արեւմտյան Հայաստանում, Բասեն գավառում: Արաքսի Մուրց վտակի ափին գտնված եւ 1830-ական թվականներին տեղահանված այն գյուղի անունը տրվել է Ախուրյանի ափին գտնվող, մոտավորապես նույնչափ ընտանեկան ծխեր ու բնակչություն ունեցող այս գյուղին: Համբարյանի վկայությամբ, որը հետաքրքրվել է ներկա բնակավայրի ու նրա շրջակայքի պատմությամբ, մոտիկ տարածքներում կան ե՛ւ հին գյուղատեղիներ, ե՛ւ կիկլոպյան ամրոցի մնացորդներ, ե՛ւ հին եկեղեցու հետքեր: Ախուրյանի մյուս՝ ձախ ափին գտնված, 19-րդ դարի վերջերին քանդված մերձակա Բոզղալա կոչված գյուղի տարածքում նաեւ «շատ գեղեցիկ բնություն է՝ անտառներ, ջրվեժ, աղբյուրներ, ձորակի մեջտեղով գետն է հոսում»: Ի դեպ, Շիրակի մարզի քարտեզին նշված է Ալվարից երեք կիլոմետր հեռու գտնվող մի գյուղ, Արավետ անունով, որը, սակայն, նախկին բնակիչների հեռանալուց հետո քանդված է եւ մնում է անբնակ:

### Վերաբնակեցման թանկ գինը

Դեկտեմբերյան երկրաշարժից հետո Ալվարում ԽՍՀՄ շինարարները կառուցել են 33 նոր տուն: Այսօր գյուղում բնակվում է ճիշտ նույնքան հայ ընտանիք, մոտ 170 բնակիչ, որոնք այստեղ հաստատվել են 1989 թվականից, ադրբեջանցի նախկին բնակչության հեռանալուց հետո: Այդ 33 ընտանիքներից 1-ը Բաքվից փախստական է, 1 ընտանիք եկել է Գորիսից, իսկ մյուս բոլորը Ջավախքի Փոքր Սամսար եւ Սաթխա գյուղերից վերաբնակներ են:

Բնակավայրը վերականգնել է Ուկրաինայի Խմելնիցկու շինարարական ջոկատը, իսկ ընդգրկված կառուցող շինարարները հիմնականում եղել են ջավախքցիներ: «Երբ ռուսաստաններից գալիս էին հայի ավեր տունը կառուցելու, էլ չէր սազի, որ ես Ռուսաստան գնայի շինարարության», ասաց նրանցից մեկը՝ այն ժամանակ եկած ու այստեղ մնացած, Ալվարի մի նոր բնակիչը դարձած **Խաչատուր Պատոյանը**: Բարձրագույն շինարարական կրթությամբ մասնագետը նոր Ալվարի գյուղապետ է ընտրվել, հետո դպրոցում է աշխատել, այդպես հիմնավորվել, մնացել է:

**- Ձեր գյուղում ձեր պայմաննե՞րը լավ չէին՝ տեղափոխվեցիք, թե՞ առիթը եղավ՝ եկաք,- հարցրի:**

- Չէ, չէ, շատ լավ էր, ինչո՞ւ, կապրեինք: Վատ չէինք: Դե, եկանք, մեր երկիրն է, մեր հողն է. քեզ վստահ ես զգում, ոտքերիդ տակ գետինն՝ ամուր...

Հետո ավելացրեց. մեկ է, վաղ թե ուշ պիտի ամեն երկիր իր ժողովրդով մնա, հայը Հայաստանում պիտի ապրի, վրացին՝ Վրաստանում... «Առաջ 600 հազար հայ կար Վրաստանում, հիմի 250-300 հազար չի մնացել»:

**- Իսկ Ջավախքո՞ւմ... ով պիտի ապրի:**

- Է, Ջավախքը... չես կարող ասել: Դա մեր մակարդակի հարց չէ: Ջավախքը ամենագլխավորը ամուր պիտի մնա, իրենք պիտի ունենան իրենց էն օրինական գրանցումն է, ամեն ինչն է, ձայն ունենան ե՛ւ պառլամենտում, ե՛ւ ամեն տեղ: Թե չէ, ասենք, որը երկու անձնագիր կհանե, որը եսիմ Ռուսաստան կանցնի, չգիտեմ ուր կանցնի, էսպես որ բոլորս փախչինք-փախչինք՝ ինքնըստինքյան հայաթափ կլինի...

Այս սահմանամերձ (Թուրքիայի եւ Վրաստանի հետ) հեռավոր, բարձրլեռնային գյուղերի լիարժեք բնակեցումն ու շենացումը մեր երկրի համար հույժ կարեւոր ռազմավարական խնդիր է, բայց՝ նմա՞ն գնով...

### Գյուղացին մենակ չի կարող հաղթահարել այսքան դժվարությունները

Խաչատուր Պատոյանի հետ մեր խոսակցությունը հիմնականում, իհարկե, այս գյուղի ու գյուղացու հոգսերի մասին էր: «Գյուղացուն ոնց որ թավի մեջ են գցե՝ ինքը իրա յուղով տապկըլտի կը, էլի,- ասաց իրենց գյուղական բարբառով:- Դժվար է, ինչ խոսք. առավոտ ժամը 5-ին, 6-ին մարդ կելնի, որ գոմ երթա, կերթաս էդքան աշխատանքը, չարչարանքը կկրես, հետո կելնես՝ հետաքրքրություն չկա: Գյուղը փոքր է, մեծ որ լինեք՝ 100, 200 տնտեսություն, գոնե հետաքրքրություն կլինեք: Հոգնիս կը մի տեսակ: Որ գործով կերթաս քաղաք, թե մի օր էլ կմնաս՝ էլ չես ուզե գալ...»: Գյուղում անասնապահությունից բացի բան չկա: Այդ երեք տասնյակ տունն է, մի գյուղապետարան ու մի դպրոց: Դրան գումարվում են ճանապարհից գյուղի կտրվածությունը, 6-8 ամիս տեւող եւ խստաշունչ ձմեռը (թեեւ անցած ձմեռը բավական մեղմ էր), տարբեր այլ խնդիրներ:

«Նոր-նոր արդեն նախարարությունները խոսում են, որ պիտի աջակցեն գյուղատնտեսությանը,- չգիտեմ ինչ նկատի ունենալով՝ ասում էր զրուցակիցս,- ինչ-որ բաներ տան, էլի, ասենք՝ արտոնություններ կամ օգտվելու հնարավորություններ տան, որ մարդը կարողանա այստեղ ապրել: Թե չէ այսպես որ մնա՝ գյուղը կդատարկվի լրիվ»:

Համայնքի ղեկավար **Արտավազդ Մկրտչյանի** հայտնած տվյալներով՝ Ալվարը 1200 հեկտար արոտավայր, 800 հեկտար բնական խոտհարք եւ 1000 հեկտար վարելահող ունի: Թվում է՝ սրանով կարելի է երեք նման գյուղ պահել, եթե գյուղացին միջոցներ եւ հնարավորություն ունենա այս հարստությունը արդյունավետ օգտագործելու, դրանով նաեւ իր անասնապահությունը ինտենսիվացնելու: Գյուղապետն ասում է, որ նայած տարվա՝ ամեն տարի մի 80-100 հեկտար մշակվում է: Այլ գյուղերի համեմատ սա դեռ լավ ցուցանիշ է: Ցորեն, գարի են մշակում, մի քիչ կարտոֆիլ: Նաեւ՝ հիմա հազվադեպ մշակվող եւ մեծ արժեք ունեցող կտավատ, որից ձեթ են հանում:

Բնակավայրը գազաֆիկացման, հարմարեցված պայմաններում գործող դպրոցի շենքի կառուցման, կենցաղի, մշակույթի, զբաղմունքի տարրական պայմանների խնդիրներ ունի: Այս փոքր գյուղից մեկ տասնյակ երիտասարդներ ամեն տարի արտագնա աշխատանքի են մեկնում, ի՞նչ անեն... Արտավազդ Մկրտչյանի կարծիքով՝ լավագույն լուծում չէ եւ համայնքների խոշորացման ծրագիրը, որով Ալվարը, հարեւան Արդենիսն ու Աղվորիկը երեւի միավորվելու են մեկ համայնքի մեջ: Ոչինչ որ չլինի՝ հիմա գոնե գյուղապետարանում մի քանի մարդ է աշխատում, 100 տոկոս բյուջե են կատարում:

Այստեղի պայմաններում ապրելը առանց չափազանցության հերոսություն է թվում կամ դրան մոտ մի բան: Մարդիկ ապրում են...առայժմ: Գյուղում գիշերային լուսավորություն են անցկացրել: Համայնքն ընդգրկված է ձեւավորվող «Արփի լիճ» ազգային պարկի աջակցության գոտում, նաեւ «Ալվար» բնական արգելավայր է ստեղծվելու: Գուցե դեպի լավը փոփոխություն լինի:

### Գյուղում պատարագ էր՝ վերամկրտության ծես

«Քանի որ այստեղ նախկինում ադրբեջանցիներն են ապրել, որոշեցինք գյուղը օծել...»,- պատմեց գյուղապետը: Տարիներ առաջ մատուռ են կառուցել, ներսում խաչքար տեղադրել, հետո խնդրանքով դիմել են Շիրակի թեմի առաջնորդ սրբազանին, քահանայի ձեռամբ օծել են տվել: Իսկ այդ օրը այս հերթական հեռավոր բնակավայրը եկել եւ դպրոցի շենքում պատարագ էր մատուցում թեմակալ առաջնորդ Միքայել եպս. Աջապահյանը: Գյուղի նոր պատմության մեջ առաջին անգամ: Եկեղեցական երգեցողության եւ քրիստոնեական սրբազան աղոթքի հնչյունները տարածվում էին գյուղի, նրա սար ու դաշտերի վրա. գյուղը վերամկրտվում էր:

Ալվարի այդտեղ հավաքված բնակչության կյանքում դա կարեւոր իրադարձություն էր, տոն: Ու նաեւ՝ համայնքի միապաղաղ առօրյայի մեջ քաղաքից այս առիթով եկած բազմաթիվ հյուրերով, թեմի մանկական պարի խմբի համերգով լցված անակնկալ մի աշխուժություն: Պատարագից հետո կից ընդարձակ սրահում հյուրընկալ սեղաններ էին բացվել, ընդհանուր հաճելի աշխույժով լցվել: Մանավանդ՝ պարի խմբի մի ողջ ավտոբուս պատանիների ու աղջիկների՝ թռչնաշունչ հիշեցնող առույգ աղմուկով, որը ի՜նչ հարստություն էր...

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**
**Գյումրի**

ՀԱՐԿԵՐ

# Ստուգումները պետք է կատարվեն ռիսկային ճանաչված ձեռնարկություններում

*Իրենց տեսակետներն են հայտնում տնտեսագետները*

«Հարկային մարմինների կատարած հարկային ստուգումների ընդհանուր քանակը 2009-ին ավելացել է 82 տոկոսով, մինչդեռ ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարները նվազել են 25 տոկոսով», այս մասին վարչապետ **Տիգրան Սարգսյանը** հայտարարեց կառավարության վերջին նիստերից մեկում, երբ ներկայացնում էր 2008-2009 թվականներին կատարված ստուգումների արդյունավետության ուսումնասիրությունը: Հարկային ստուգումների, դրանց արդյունավետության, տնտեսվարողների, հատկապես փոքր բիզնեսի դժգոհության, հարկային մուտքերի ապահովման ժամանակ վարչարարության չարաշահումների վերաբերյալ այդ օրը վարչապետի ներկայացրած տվյալները տարատեսակ մեկնաբանությունների արժանացան քաղաքական ուժերի կողմից, որոնք, սակայն, այս ամենը փորձեցին ներկայացնել իրենց քաղաքական շահերի տեսանկյունից: Այս հարցերի շուրջը մասնագիտական մեկնաբանություններ ստանալու խնդրանքով դիմեցինք տնտեսագիտության դոկտոր **Գագիկ Վարդանյանին** եւ տնտեսագիտության թեկնածու **Սամվել Ավագյանին**:

Ըստ Գագիկ Վարդանյանի, տնտեսվարող սուբյեկտները հիմնականում աշխատում են գրագետ, եւ այստեղ հարկային վարչարարական խնդիրներ գրեթե չկան: «Այլ բան է, որ կարող են հանդիպել հարկերից խուսափելու դեպքեր, ինչն անհնար է առանց համապատասխան մարմինների հետ համաձայնեցնելու: Եվ ստուգումները չէ, որ պետք է բացահայտեն դրանք», ասում է տնտեսագիտության դոկտորը եւ ավելացնում, որ ստվերային գործունեությունը բխում է տնտեսական նպատակահարմարությունից, այսինքն՝ օրինական աշխատելու դեպքում հնարավոր չէ գոյատեւել: Այստեղ, ըստ նրա, առկա է հիմնախնդիր. լեգալ աշխատելն ուղղակի պետք է դարձնել տնտեսապես հնարավոր եւ շահավետ: Իսկ սեւ ստվերը բնութագրվում է գերշահույթ ստանալով եւ կապված չէ մարդկանց կենսական նվազագույնը ապահովելու խնդրին: Այստեղ օրենքի ուժը պետք է գործադրվի ամբողջությամբ:

«Ստուգումներն ինչքան շատանում են, այնքան հարկային մուտքերը նվազում են: Այլապես ինչպես բացատրել, որ վարչարարության խստացման պայմաններում 25%-ով միջին եւ առանձին դեպքերում 2-3 անգամ նվազել են լրացուցիչ առաջադրված գումարները: Զարգացած երկրներում գոյություն ունի «արդարացի հարկային օրենք» հասկացությունը, ինչը ենթադրում է հարկային բեռի արդարացի բաշխում տնտեսվարող սուբյեկտների եւ ֆիզիկական անձանց միջեւ: Այս առումով մենք ունենք լուրջ խնդիրներ: Միաժամանակ, դառնալով հարկային վարչարարության առնչությամբ վարչապետի արտահայտած մտահոգությանը, կարելի է ասել, որ հարկային վարչարարությունն էլ արդարացի չի կիրառվում եւ անբարենպաստ է հատկապես ՓՄՁ-ի առումով», եզրակացնում է մեր զրուցակիցը:

Տնտեսագիտության թեկնածու Սամվել Ավագյանի կարծիքով՝ ստուգումների քանակի ավելացումը կապված է հիմնականում ՀԴՄ շահող կտրոնների ներդրման հետ: «Բյուջեի հետ պարտավորությունների մասով ստուգումների էական ավելացումներ չկան, դրանք հնարավոր էլ չեն, քանի որ վերջին տարիներին հարկային վարչարարությունը հասել է իր գագաթնակետին: Գործնականում հարկային դաշտում չկան հարկային մարմնի ուշադրությունից դուրս գործարարներ, եթե հովանավորչության խնդիր չկա: Վարչարարության խստացումը վերաբերում է ոչ թե ստուգումների հաճախության ավելացմանը, այլ հարկային տեսուչի կողմից գործարարի առջեւ լրացուցիչ պահանջներ են դրվում, որից առաջացող հարկային պարտավորությունը դժգոհությունների ալիք է ստեղծում»:

Ինչ վերաբերում է ստուգումների քանակի ավելացմանը, ապա Գագիկ Վարդանյանն այն տեսակետն է հայտնում, որ դա տարբեր դրդապատճառներ կարող է ունենալ: «Դրանցից մեկն ընթացիկ տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունն է տնտեսական աճի վրա, ինչը դրսեւորվեց 2009-ին երկրի տնտեսության 14,4% անկումով: Ակնհայտորեն՝ հարկային մուտքերը պետք է նվազեին, ինչը կարող էր մեկնաբանվել որպես հարկային համակարգի վատ աշխատանքի արդյունք: Հետեւաբար՝ համակարգը պետք է փորձեր «ոլորել» ձեռնարկատերերի, հատկապես՝ ՓՄՁ-ի ձեռքերը, որպեսզի ապացուցեր, որ արդյունավետ է աշխատում»

Գագիկ Վարդանյանը գտնում է, որ կարելի էր իրականացնել համապատասխան վերլուծություններ՝ ճշտելու համար, թե որ ոլորտներից եւ որքան հարկային մուտքեր չեն կարող ակնկալվել եւ ընդհակառակը՝ տնտեսության անկման պայմաններում որտեղից հնարավոր կլինի լրացուցիչ եկամուտներ մուտքագրել բյուջե (օրինակ՝ տնտեսության ստվերային հատված) եւ խուսափել հարկատուի ու հարկային մարմնի միջեւ ավելորդ լարվածություն ստեղծելուց, ինչու չէ՝ նաեւ պետական ծառայողի արժանապատիվ կեցվածքի վրա բիծ գցելուց. «Ի վերջո հարկային տեսուչների համար էլ է դժվար դիմել քայլերի, որոնք պատիվ չեն բերում ոչ մեկին»:

Ստուգումների քանակի ավելացման վերաբերյալ գրեթե նույնն էր նաեւ Սամվել Ավագյանի կարծիքը: «Յուրաքանչյուր տարի պետական բյուջեն հաստատելիս նշվում է այն գումարը, որ բյուջեն պետք է ստանա հարկային վարչարարության խստացման միջոցով: 2009-ին այդ աղբյուրը 6 մլրդ դրամ էր, 2010-ի բյուջեում՝ 11 մլրդ: Այսինքն՝ հարկային մարմինը կատարում է այն, ինչ իրեն հանձնարարում կամ պահանջում են վերեւներից», ասում է նա եւ ավելացնում, որ իրականում հարկային մարմինները շահագրգռված չեն նման խստացումներով, բայց պարտադրված են կատարել պլանները:

Վարչապետի մատնանշած մյուս խնդիրն առնչվում էր ստուգումների հաճախականությանը, որի վերաբերյալ Գագիկ Վարդանյանը նշում է, որ հարկային մարմինները շատ հաճախ ստուգման փոխարեն կիրառում են ըստ առանձին հարկատեսակների «ուսումնասիրության» մոտեցումը: «Մինչդեռ վարչարարական այդպիսի հնարքներն ավելի են նյարդայնացնում տնտեսվարող սուբյեկտներին», իրավացիորեն նշում է նա՝ ավելացնելով, որ ուսումնասիրության գաղափարը վատը չէ, եթե իրականացվի հարկային ներուժի, հարկային վարչարարության կատարելագործման հնարավորությունների բացահայտման նպատակով, որից հարկատուները միայն գոհ կլինեն: «Ինչպես դա արվել է տարիներ առաջ, երբ ալկոհոլային խմիչքներ արտադրողները, օգտվելով օրենսդրական բացից, չնչին հարկեր էին վճարում», հիշեցնում է մեր զրուցակիցը:

Իսկ Սամվել Ավագյանը ստուգումները կանոնակարգելու նոր հայեցակարգի անհրաժեշտությունն ընդհանրապես չի տեսնում, փաստելով, որ 2009-ի հունիսին կառավարությունը հաստատել է «Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի վերաբերյալ» հայեցակարգը, որով կանոնակարգվում է ստուգումների գործընթացը, եւ որը «հարկավոր է տանել մինչեւ վերջ»: Տնտեսագետը փաստում է, որ այս հայեցակարգում կարեւոր դրույթներ կան այն մասին, որ ստուգումները պետք է կատարվեն ռիսկային ճանաչված ձեռնարկություններում, իսկ այդ ձեռնարկությունների ընտրությունը պետք է կատարի համակարգիչը: «Հետեւաբար՝ պարտաճանաչ հարկատուները կազատվեն ստուգումներից: Կարծում եմ՝ խնդիրն այս հայեցակարգը չկիրառելու մեջ է», եզրահանգում է Սամվել Ավագյանը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# «Ադրբեջանը շատ բան կշահեր՝ փոխելով իր քաղաքականությունը ԼՂ ուղղությամբ»

## *Գրում է ամերիկյան կայքը*

Օրեր առաջ Իսրայելը բավական անսպասելի քայլ կատարեց՝ համաձայնելով շարունակել երկխոսությունը՝ Պաղեստինի անկախ պետականության կարգավիճակի շուրջ: Այս առումով ամերիկյան Huliq.com կայքը հանդես է եկել հրապարակմամբ, որտեղ մասնավորապես ասվում է. «Իսրայելի կառուցողական մոտեցումն անմիջապես դրական արձագանք ստացավ միջազգային հանրության շրջանակներում, եւ զգալի առաջընթաց արձանագրեց Միջին Արեւելքի տարածաշրջանում: Նույն կերպ էլ Ադրբեջանը շատ բան կշահեր, եթե նույն պատրաստակամությամբ հանդես գար Լեռնային Ղարաբաղի պարագայում, քանի որ Ադրբեջանի ներկայիս քաղաքականությունը որեւէ դրական արդյունք չի տալիս ոչ Ադրբեջանին, ոչ էլ ԼՂ-ին: Բաքուն հաճախ է կրկնում, թե ինքը համաձայն է Մադրիդյան սկզբունքներին, սակայն չէ՞ որ հենց այդ սկզբունքները պայմանավորում են Լեռնային Ղարաբաղի հետագա կարգավիճակը: Մադրիդյան սկզբունքների վերջին դրույթում մասնավորապես նշված է. «...ապագայում Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի սահմանում՝ այնտեղ բնակվողների կամքի դրսեւորման միջոցով»: Բոլորին է հայտնի, որ եթե կայանա «այնտեղ օրինական բնակվողների» կամքը, ապա ԼՂ-ն կանկախանա, քանի որ Ղարաբաղի բնիկ ժողովուրդը՝ հայերը, արդեն մեկ անգամ հանրաքվե անցկացրել է անկախանալու օգտին: Այնպես որ, եթե Ադրբեջանը հայտարարում է, թե ինքը համաձայն է Մադրիդյան սկզբունքներին, ապա ինչպե՞ս կարող է չընդունել այնտեղ «օրինականորեն բնակվողների կամքի դրսեւորումը» եւ «ոչ» ասել ԼՂ անկախությանը»:

Ամերիկյան կայքէջը եզրակացնում է, որ նման քաղաքականությունը միայն թուլացնում է Ադրբեջանի դիրքերը, քանի որ ամեն օր պատերազմի կոչեր անելով Բաքուն ոչինչ էլ չի շահում. «Նույնիսկ եղբայր Թուրքիան չկարողացավ Ադրբեջանի օգտին որեւէ արդյունքի հասնել ղարաբաղյան հարցում: Հետեւաբար Ադրբեջանը պետք է փոխի իր քաղաքականությունը, ինչպես ՀՀ նախագահն է ասում՝ խնդրի լուծումը կարող է ընդամենը մի քանի ժամ տեւել, եթե Ադրբեջանը հարգի ազգերի ինքնորոշման իրավունքը», եզրակացնում է Huliq.com-ը՝ հանդես գալով հետեւյալ վերջաբանով. «Մենք ապրում ենք այնպիսի աշխարհում, որտեղ առկա է Կոսովոյի նախադեպը, որտեղ ընդունվել է ԱՄՆ-ի Սպիտակ տան բանաձեւը՝ Պուերտո Ռիկոյի իրավունքների վերաբերյալ (HR 2499), եւ հիմա էլ Իսրայելն է իր համաձայնությունը տալիս՝ բանակցելու Պաղեստինի կարգավիճակի շուրջը: Որտե՞ղ է Ադրբեջանի տեղն այս աշխարհում», եզրափակում է ամերիկյան կայքը: Անշուշտ վերոհիշյալ կայքը՝ խոսելով «մեր ապրած աշխարհի մասին», «հասկանալի պատճառներով» չի նշում, որ կան նաեւ Աբխազիան եւ Հարավային Օսիան, Մերձդնեստրը: Հավելենք նաեւ, որ այս հոդվածն էլ, որը մեզ հասանելի դարձավ «Պանորամա.ամ»-ի շնորհիվ, եւս մեկ անգամ ապացուցում է՝ սկսվել է շարժում, որը նպաստավոր է ԼՂ-ի ներկա կարգավիճակի ճանաչմանը:

**Հ. ԱՓՅԱՆ**

# Ընդունվեց եվրոգոտու կայունացման աննախադեպ ծրագիր

**Եվրոմիության երկրների ֆինանսների նախարարները Բրյուսելում 11 ժամ տեւած բանակցություններից հետո երեկ համաձայնեցրել են ընդհանուր արժույթին՝ եվրոյին օժանդակելու մեխանիզմը: Արտակարգ միջոցառումները վերաբերում են մոտ 500 մլրդ եվրո ընդհանուր արժողությամբ վարկերի եւ երաշխիքների տրամադրմանը, նշում է BBC ռադիոկայանը:**

**Այդ գումարը ներառում է վարկերի տեսքով Եվրոհանձնաժողովի հավաքելիք 60 մլրդ եվրոն եւ ԵՄ պետությունների 440 մլրդ եվրո կազմող երաշխիքները:**

**Բացի դրանից, Արժույթի միջազգային հիմնադրամը կհատկացնի շուրջ 220 մլրդ եվրո:**



**Այս հիմնադրամը կարող է խոշորագույն ֆինանսական մեխանիզմը դառնալ համաշխարհային պատմության մեջ: Դրա շնորհիվ հնարավոր կլինի արագորեն միջոցներ ներգրավել ԵՄ երկրների ֆինանսական համակարգերի կայունացման համար:**

**Տնտեսագիտության գծով ԵՄ հանձնակատար Օլլի Ռենը հայտարարել է, որ համաձայնագիրը հաստատում է «ամեն գնով» եվրոն պաշտպանելու ԵՄ վճռականությունը:**

**Ավելի վաղ եվրոգոտու 16 երկրները համաձայնել էին 80 մլրդ եվրո վարկ տալ ֆինանսական ճգնաժամից առավել շատ տուժած Հունաստանին (եւս 30 մլրդ կհատկացնի ԱՄՀ-ն): Վարկերը Հունաստանին կտրվեն 3 տարվա ընթացքում:**

**Եվրոգոտու երկրների ղեկավարները նաեւ պայմանավորվել են կայունացման մեխանիզմ ստեղծել ֆինանսական ծանր կացության մեջ հայտնվող երկրներին օգնելու համար: Նաեւ որոշվել է խստացնել ԵՄ երկրների բյուջետային կարգավորման կանոնները: ԵՄ բոլոր կառույցները, այդ թվում՝ Կենտրոնական բանկը, «բոլոր միջոցները կօգտագործեն եվրոգոտու կայունությունն ապահովելու համար»: Այդ մասին նշվում է ընդունված համատեղ հայտարարության մեջ: «Լիբերասիոն» թերթը մանրամասնում է, որ, օրինակ, Կենտրոնական բանկը (Ֆրանկֆուրտ) ձեռք կբերի պետական պարտատոմսեր, ինչը հավասարազոր է դրամ փոխ տալուն:**

# Ռուս-թուրքական բարձրագույն մակարդակի համագործակցության խորհուրդն ու ԼՂ հարցը

*1-ին էջից*

Մեդվեդեւի՝ այցելությունից առաջ «Զաման» թերթին ուղարկված հոդվածի համաձայն, Թուրքիա մայիսի 11-12-ի այցելությանը ձեւավորվելու է միջազգային խորհրդակցությունների սկզբունքորեն նոր մեխանիզմ՝ Բարձրագույն մակարդակի համագործակցության խորհուրդ, որ նախագահելու են ՌԴ նախագահն ու Թուրքիայի վարչապետը:

Ռուսաստանի նախագահի օգնական Սերգեյ Պրիխոդկոյի ներկայացմամբ, վերջին ժամանակներս Թուրքիա-Ռուսաստան հարաբերությունները ռազմավարական գործընկերության նոր որակական մակարդակ են դուրս գալիս՝ հենվելով 2009-ի փետրվարին Մոսկվա Գյուլի կատարած այցելության ժամանակ ստորագրված հռչակագրի դրույթների վրա: Ձեւավորվելիք խորհրդի առաջին նիստը տեղի է ունենալու Անկարայում Ռուսաստանի նախագահի այս այցելության ընթացքում:

Նախատեսվող քսանից ավելի փաստաթղթերի ստորագրման ու տարբեր հարցերի քննարկման ֆոնին քննարկվելու են տարբեր միջազգային ու տարածաշրջանային հարցեր, այդ թվում՝ հայ-թուրքական եւ ղարաբաղյան թեմատիկայով: Մասնավորապես, Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Հալիլ Աքընջին Ռուսաստանի նախագահի այցելության առնչությամբ «Ինտերֆաքսին» տված իր հարցազրույցում հայտարարել է, թե Ռուսաստանն ամբողջովին աջակցում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը եւ սահմանների բացմանը, պաշտպանելով այն տեսակետը, որ Ղարաբաղի խնդիրը եւ Ցյուրիխում ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները իրարից պետք է տարանջատվեն:

Այս ամենով հանդերձ, ըստ Թուրքիայի դեսպանի, իրենք Ադրբեջանի հետ լավ հարաբերություններ ունեն, եւ «ստիպված ենք Ղարաբաղի հարցում հավասարակշռություն պահպանել»: Ըստ թուրք դեսպանի, հայ-թուրքական արձանագրություններն առկախվել են, սակայն ոչ ոք չի հայտարարել, որ հետ են կանչվել, եւ հարմար քաղաքական իրավիճակի դեպքում ղեկավարները կրկին արձանագրությունները կմտցնեն օրակարգ:

Ասելով, թե Ռուսաստանը եւս, այլ երկրների նման, ընդունելի չի համարում հայ-թուրքական գործընթացի շաղկապումը ղարաբաղյան հարցին, ՌԴ-ում Թուրքիայի դեսպանը հարցադրում է արել, թե «ինչպես կարող է ղարաբաղյան խնդրում առանց առաջընթաց գրանցվելու բացվել սահմանը: Անհրաժեշտ է հիշել, թե ինչի համար է փակվել սահմանը»:

Ամեն դեպքում, ըստ Հալիլ Աքընջիի, Ռուսաստանը կարող էր ավելի ակտիվ դերակատարություն ունենալ ղարաբաղյան գործընթացում եւ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման հարցում, ընդգծելով, թե ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներից միայն Ռուսաստանն է տարածաշրջանի երկիր: Դեսպանի վկայությամբ, այս հարցը կդառնա ռուս-թուրքական քննարկման առարկա:

Թուրքական մամուլը, մասնավորապես, «Հյուրիեթ» պարբերականը գտնում է, որ միայն Վլադիմիր Պուտինի նախագահությամբ «ջերմացած» ռուս-թուրքական գործընկերության համար ցուցանիշ կարող է լինել ղարաբաղյան հարցը:

Եթե հաշվի առնենք, որ ռուս-թուրքական բանակցություններում էներգետիկ հարցերի քննարկումը մեծ նշանակություն ունի եւ այդ հարցում համաձայնագրերի ստորագրում է նախատեսվում, ապա թերեւս ուրախալի ոչինչ չի կարելի տեսնել ռուս-թուրքական սերտացող հարաբերություններում, թեեւ, նկատի առնելով թուրքական դիվանագիտության առանձնահատուկ դրսեւորումները, դժվար է ենթադրել, թե իրապես ինչի կհանգեցնի ռուս-թուրքական մերձեցումը: Այս ամենին այսպես թե այնպես կավելանա նաեւ Միացյալ Նահանգների գործոնը՝ որպես Թուրքիայի ռազմավարական գործընկերոջ:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Ամանո. «Իսրայելը պետք է ստորագրի Միջուկային զենքի չտարածման պայմանագիրը»

**ՄԱԳԱՏԷ-ի ղեկավար Յուկիա Ամանոն նամակ է հղել Միջուկային զենքի չտարածման պայմանագիրն ստորագրած երկրներին՝ առաջարկելով հատուկ բանաձեւով Իսրայելից պահանջել միանալ այդ փաստաթղթին:**

**Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, միջուկային տերություններ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Չինաստանը արդեն հավանություն են տվել Մերձավոր Արեւելքը միջուկազերծ գոտի հայտարարելու նախաձեռնությանը, որի հեղինակը Արաբական պետությունների լիգան է: Ինչ վերաբերում է ՄԱԳԱՏԷ-ի ղեկավարի նախաձեռնությանը, նա առաջարկում է, որ Միջուկային զենքի չտարածման պայմանագիրն արդեն ստորագրած 151 երկրները մշակեն բանաձեւ, որն Իսրայելին կհորդորի միանալ պայմանագրին:**

**Ամանոյի կարծիքով, Իսրայելի միջուկային օբյեկտներում միջազգային վերահսկողության սահմանումը կնպաստի Մերձավոր Արեւելքի կայունությանը եւ կամրապնդի միջուկային զենքի չտարածման ռեժիմը:**

**Սակայն Իսրայելի կառավարական աղբյուր վկայակոչող Ասոշիեյթեդ պրեսը նշում է, որ այդ երկիրը մտադիր չէ ստորագրել հիշյալ պայմանագիրը: Գլխավոր պատճառն այն է, որ ստորագրելու դեպքում հրեական պետությունը ստիպված կլինի առաջին անգամ բացեիբաց խոստովանել միջուկային զենք ունենալու փաստը:**

**Իսրայելի ղեկավարությունը նման խոստովանությունը ձեռնտու չի համարում ռազմավարական տեսակետից: Բանն այն է, որ միջուկային զինանոցի գոյությունը չընդունելով եւ չմերժելով՝ Իսրայելը հեշտությամբ կանխում է ուրիշ երկրների հնարավոր նախահարձակումը:**

# Բարզանի. «Քրդերը կընդգրկվեն Իրաքի նոր կառավարությունում»

**Քրդական կուսակցությունները մասնակից կդառնան Իրաքի նոր կառավարության կազմավորման բանակցություններին: Այդ մասին հայտարարել է Իրաքի հյուսիսում համահավաք ապրող քրդերի առաջնորդ Մասուդ Բարզանին, որի խոսքերը մեջբերում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Բաղդադ կմեկնի քրդական պատվիրակություն, նշել է Բարզանին՝ հույս հայտնելով, որ երկրի նոր կառավարությունը կկազմվի գործընկերության սկզբունքներով:**

**Իրաքում մարտի 7-ին անցկացված խորհրդարանական ընտրություններում քրդական կուսակցությունները ստացել են խորհրդարանի 321 տեղերից 59: Այդ կուսակցությունների թվում է Բարզանիի Քրդական ժողովրդավարական կուսակցությունը:**

**Ընտրություններում հաղթող էր ճանաչվել նախկին վարչապետ Իյադ Ալլավիի ընդդիմադիր դաշինքը: Ավելի ուշ գործող վարչապետ Նուրի ալ Մալիքին (որի «Օրենքի պետություն» դաշինքը գրավել էր երկրորդ տեղը) պահանջել էր վերահաշվարկել քվեները, վկայակոչելով իբր տեղի ունեցած բազմաթիվ խախտումները:**

**Իրաքի ընտրական հանձնաժողովը համաձայնել էր վերահաշվարկել միայն առանձին տարածաշրջանների քվեաթերթիկները: Ամեն դեպքում կուսակցություններից ոչ մեկը չի ստացել այնքան տեղ, որը բավարար կլիներ ինքնուրույն կառավարություն կազմելու համար: Այդ պատճառով նոր կառավարությունը մինչեւ օրս չի ձեւավորվել:**

# Ձախողման վտանգ պաղեստինա-իսրայելական բանակցություններում

Իսրայելի իշխանությունները հրաժարվում են սառեցնել Երուսաղեմի կառուցապատման նախագիծը, ինչը պաղեստինցիների նախապայմանն էր հաշտության բանակցությունները վերսկսելու համար: Իսրայելի դիրքորոշումը հայտնի է դարձել Ֆրանսպրեսի թղթակցին, որը վկայակոչում է վարչապետ Բենիամին Նաթանյահուի շրջապատի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին:

Իր անվան հրապարակումը չցանկացող այդ պաշտոնյայի խոսքերով, վարչապետը հայտարարել է, որ Երուսաղեմի արեւելյան մասում շինարարությունը սկսվելու է ըստ ծրագրի, եւ որ Իսրայելի իշխանությունները տվյալ հարցը վերանայելու պարտավորություն չեն ստանձնել:

Այսպիսով հերքվում են ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչ Ֆիլիպ Կրոուլի այն խոսքերը, թե Իսրայելը համաձայնել է առաջիկա երկու տարում սառեցնել շինարարությունը Արեւելյան Երուսաղեմի Ռամաթ Շլոմո բնակավայրում:

Հրեա պաշտոնյան պարզաբանել է, որ շինարարությունն իրոք սկսվելու է մի քանի տարի հետո, բայց դա կապված է ոչ թե նախագծի սառեցման, այլ հատակագծման տեխնիկական աշխատանքների հետ:

Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը շինարարության սառեցումից Իսրայելի հրաժարումն անվանել է «հաշտության բանակցություններին խանգարելու փորձ եւ ԱՄՆ-ին նետված մարտահրավեր»: Ժամանակին **«Ազգը»** գրել է, որ ԱՄՆ-ը մտադիր է որպես միջնորդ հանդես գալ պաղեստինա-իսրայելական հաշտության անուղղակի բանակցություններում:

Ավելի վաղ՝ մայիսի 9-ին, Պաղեստինի վարչակազմը հայտարարել էր, որ Իսրայելի հետ բանակցություն է սկսում Մերձավոր Արեւելքում ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ Ջորջ Միտչելի միջնորդությամբ:

Միաժամանակ պաղեստինցիները պահանջում են, որ Իսրայելը հրաժարվի Ռամաթ Շլոմոյում հրեական ընտանիքների համար 1600 տուն կառուցելու ծրագրից, որի մասին հայտարարվել էր 2010-ի մարտին:

ԱՄՆ-ը միացել է պաղեստինցիների այդ պահանջին:

AZG NEW PDF.qxd 10/05/2010 21:18 Page 1



Սուրբ երկիր չեն գնում, այլ բարձրանում են, ինչպես բարձրանում են Արարատ լեռը: Սուրբ երկրից չեն հեռանում, այլ իջնում են՝ ինչպես իջնում են Արարատ լեռից: Սուրբ գրքի բնագրերում հենց այդ բառերն են գործածվում՝ բարձրանալ եւ իջնել: Այդպես պահպանվել է առ այսօր: Երուսաղեմ բարձրանալը, սակայն, կապված չէ նրա դիրքի հետ, այլ այն հարատեւ հավատամքի, որ այնտեղ բնակություն հաստատողը վերելք է ապրում՝ մտքի, հոգու, կեցության, իսկ իջնողը՝ վայրէջք:

Այդպես դեպի Սուրբ երկիր է ձգտել նաեւ հայ ուխտավորը, հոգեւոր վերելք ապրել երկնաձույլ Երուսաղեմում ու կերտել իր Երուսաղեմը, որին հրեաներն անվանում են «քաղաք՝ Հին քաղաքի տրտում»: Արարատից Սիոն հասած հայ ուխտավորը 4-րդ դարից ի վեր իր մտքի խոյանքներն է դրոշմել բոլոր սրբավայրերում ու դարձել է քրիստոնեական մշակույթի հարատեւ բուրվառը:

«Արարատից Սիոն» վավերագրական ֆիլմը, որը մայիսի 5-ից ցուցադրվում է «Մոսկվա» կինոթատրոնում երբեւէ չեղած կինոդիտողին նրանք տանում են անսովոր, բայց իրական մի աշխարհ, որը լեցուն է կողքի-կողքի ապրող երեք կրոնների մոլեռանդ հետեւորդներով, ինքնամոռաց պարող ուխտավորներով, Զատկի լույսով մաքրագործված դեմքերով, մահակներով շրջող իսրայելցի ոստիկաններով, խումբ-խումբ գետնին նստած հրեա աղջիկ զինվորներով... «Յուրաքանչյուր ճանապարհ սկիզբ է» եւ այդ սկիզբը բիբլիական Արարատից է, որի գագաթին ուխտավորների հետ աղոթում է ֆիլմի պրոդյուսերը: Վերջին կադրերում դարձյալ Արարատն է՝ ձյունածածկ գագաթին ծնկաչոք աղոթող ուխտավորներով: Ֆիլմի հերոսը Սուրբ երկրում իր ինքնության ձեռագիրը կերտած հայ ուխտավորն է՝ Երուսաղեմում, Սիոն լեռան վրա, Հուդայի անապատում, Բեթղեհեմում, Յաֆայում, Ռամլեում, Նազարեթում, Եգիպտոսում՝ Սինայի լեռան Սուրբ Կատարինե վանքում եւ այլուր: Հայկական արձանագրություններ վանքերի պատերին, շիրմաքարերին, խեցեգործական արվեստի փայլուն նմուշներին՝ եզակի Սուրբ երկրի ամբողջ տարածքում: Հայերի աստվածատուր առաքելության մասին խոսում են ոչ թե հայերը, այլ օտարները, այդ թվում հրեա գիտնականները՝ հայագետ Մայքլ Սթոունը, հնագետ Դավիդ Ամիդը, պատմաբան Բենիամին Հար-Էվենը: Պատմում են հայերի՝ Երուսաղեմի նվաճողների կողմից երբեք արտաքսված չլինելու, հնագիտական վերջին պեղումների ժամանակ հայտնաբերված հայերեն բացառիկ խեցեղեն արձանագրությունների, 4-րդ դարում հայաստանցի հոգեւորականի կառուցած հսկայական վանական համալիրի եւ այլնի մասին:

# Հայ ուխտավորի հավատամքի հարատեւ բուրվառը

## Հայկական Երուսաղեմ



Հայ հոգեւորականի խոսքը ֆիլմում չի հնչում, նա լուռ ու գլխահակ իր առաքելությունն է կատարում՝ ամեն գիշեր դրսից փակվող Սբ Հարության տաճարի ներսում մնալով, 300 կանթեղ ունեցող Սբ Հակոբ վանքում ամեն օր աղոթելով, Մատենադարանի 30 հազար ձեռագրերը սրբորեն պահպանելով, Յաֆայի հայկական եկեղեցին նորոգելով, հայ մանուկներին ու ճեմարանականներին մայրենիից բացի արաբերեն, եբրայերեն, անգլերեն, ֆրանսերեն ուսուցանելով, Սուրբ երկրի բախումնային մթնոլորտում դիմակայելու գերմարդկային ճիգեր թափելով...«Քրիստոնյաների միջեւ նույնպես լուրջ խնդիրներ կան: Անհանդուրժողականությունը, իրավունքների պահպանման խնդիրները ներսից պառակտել են նրանց ու դարձրել խոցելի արտաքին վտանգներից: Սիրո պակասը դարձել է սիրո կրոնի հետեւորդների մեծագույն խնդիրն ամենուր ու հատկապես այստեղ: Հայկական համայնքը, բնականաբար, ենթարկվում է այս բոլոր վտանգավոր փորձություններին», հնչում է ֆիլմում՝ որպես նախազգուշացում եւ զգոնության կոչ:

Ֆիլմի հեղինակների բնութագրմամբ, «ֆիլմը հայերի համամարդկային սրբասավորության պատմությունն է, որը գրվել է աշխարհի կողմից, աշխարհի հոգեւոր կենտրոնում: «Արարատից Սիոնը» պատկանելության եւ արժանապատվության կոչ է հայ մարդուն՝ դուրս գալու փոքրության բարդույթից եւ սեփական պատմության տերը դառնալու: Արարատը գերեվարված է, բայց մենք կանք Սիոնի վրա»:

Այսպիսով, ֆիլմը երախտիքի տուրք է միլիոնավոր հայ ուխտավորներին՝ «մահտեսիներին», որոնց հոգեւոր սխրանքի եւ ինքնազոհության գնով հայերն այսօր քրիստոնեական գլխավոր սրբավայրի հիմնական իրավատերերից են:

նում, առաջին իսկ կադրերից գրավում է խոսքի ուժով, որ էկրանից դիտողին է փոխանցվում մաքրամաքուր հայերենով ու գեղեցիկ առոգանությամբ( Արա Դեղտրիկյանի ընթերցմամբ) եւ ցանկություն է առաջացնում մտապահելու այն բոլոր մտքերը, որ ամենքինն են, բայց՝ չասված կամ կիսով չափ ասված: Սցենարի հեղինակն ու պրոդյուսերը Տեր Մեսրոպ քահանա Արամյանն է, ռեժիսորը՝ Էդգար Բաղդասարյանը, գլխավոր օպերատորը՝ Ռուբեն Գասպարյանը, երաժշտության հեղինակները՝ Լիզա Ջերարդը եւ Արա Թորոսյանը: Բացառիկ ու խորիմաստ կադրերի ընտրությունն ու դրանց նրբին մատուցումը վկայում են ֆիլմի ռեժիսորի եւ օպերատորի հմտության ու վարպետության մասին: Երուսաղեմի բազմալեզու ու բյուրադեմ Հին

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# Ֆիլմ՝ սպիտակ արագիլների մասին

ARAGIL, the White Stork վավերագրական ֆիլմի հեղինակը ամերիկահայ ռեժիսոր Շիրակ Խոջոյանն է (ծնունդով Իրաքից), որի շնորհիվ առաջին անգամ Հայաստանում նկարահանվում է ֆիլմ արագիլների մասին:

Պաշտամունքային թռչնատեսակի՝ սպիտակ արագիլի օգտագործումը լավ միջոց է մարդկանց ուշադրությունը շրջակա միջավայրի խնդիրների վրա հրավիրելու համար: Արագիլը բացառիկ թռչուն է ոչ միայն մեր ժողովրդի լեգենդների մեջ: Այն նաեւ բացառիկ ինդիկատոր է՝ վեր հանելու բնապահպանական խնդիրները. ուսումնասիրելով արագիլներին կարելի է պարզել հողի եւ ջրաճահճային տարածքների աղտոտվածության, թունաքիմիկատների առկայության աստիճանը, կլիմայական փոփոխության ազդեցությունը, ջրային միջավայրի եսաճը, ինչպես նաեւ մարդու վերաբերմունքը բնությանը:

Հայաստանում սպիտակ արագիլի ուսումնասիրություններով զբաղվում է միայն Հայաստանի ամերիկյան համալսարանի «Հակոբյան բնապահպանական կենտրոնը», որի աշխատանքներում ներգրավված են բների հարեւանությամբ ապրող բնակիչները. նրանց դիտարկումներն ու գրանցումները անմիջականորեն տեղ են գտնում գիտահետազոտական աշխատանքներում:

Սպիտակ արագիլի ուսումնասիրությունը այնքան կարեւոր է, որ այն արժանացել է անգամ բրիտանացիների ուշադրությանը: 2007-ին հայաստանցի թռչնաբան, կենսաբանական գիտությունների թեկնածու Կարեն Աղաբաբյանը արժանացավ Միացյալ Թագավորության բնապահպանական ամենախոշոր մրցանակին. «Ուիթլի» մրցանակը բնապահպանության ոլորտում աշխարհում խոշորագույն մրցանակներից մեկն է, որին արժանանում են տարեկան ընդամենը ութ հոգի:

Ֆիլմը պատմում է ոչ միայն Հայաստանի սպիտակ արագիլների եւ նրանց օգնությամբ վեր հանված բնապահպանական խնդիրների մասին:

Ֆիլմի հեղինակն աշխատել է որպես պրոդյուսեր, մոնտաժող հոլիվուդյան այնպիսի ֆիլմերում ինչպիսիք են The Norseman, The Evictors, The Legend of Boggy Creek II, Sacred Ground եւ շատ ուրիշներ:

«Արագիլ, դը ուայթ ստորք» 30 րոպեանոց վավերագրական ֆիլմի առաջին ցուցադրությունը կայացավ Հայաստանի ամերիկյան համալսարանի Մանուկեան դահլիճում:

Այս մասին տեղեկացնում է ՀԱՀ հասարակայնության հետ կապերի բաժինը:

ԳՆԱՀԱՏԱՆՔ

# ԹՄՄ-ն պատվել է Երվանդ Պապայանին

Գլենդեյլի կենտրոնական գրադարանում Թեքեյան մշակութային միության լոսանջելեսյան մասնաճյուղի եւ Այնթապահայերի մշակութային ընկերության համատեղ կազմակերպությամբ հարգանքի տուրք է մատուցվել նվիրված ՌԱԿ անդամ, հասարակական-կուսակցական եւ կրթական գործիչ, հռետոր եւ դասախոս



տիարակ **Երվանդ Պապայանի** 75-ամյա ազգանվեր գործունեությանը Սիրիայում, Լիբանանում եւ ապա Մ. Նահանգներում: Միաժամանակ ներկայացվել է նրա վերջին գիրքը՝ «Չպետք է մոռանալ նրանց» խորագրով, որտեղ կենսագրական տվյալներ են ընդգրկված Մերձավոր Արեւելքում եւ Ամերիկայում գործունեություն ծավալած այնպիսի ականավոր ազգային գործիչների մասին, ինչպիսիք են Գերսամ Ահարոնյանը, Անդրանիկ Անդրեասյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Ալեքսանդր Սարուխանը, Նուբար Ակիշյանը եւ Ալեք Գլըճյանը:

Օրվա հանդիսավար **Բարսեղ Գարբայյանի** բացման խոսքերից հետո խոսք են առել ԹՄՄ-ի Լոս Անջելեսի մասնաճյուղի ատենապետ **Վաչե Սեմերջյանը** եւ ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչության անդամ **Սինան Սինանյանը:** Վերջինս Երվանդ Պապայանին է հանձնել ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի ողջույնի գիրը եւ «Պատվո մեդալը»:

Այնթապցիների Մշակութային ընկերության անունից ելույթ է ունեցել **Թագուհի Արզումանյանը**, իսկ դոկտ. **Գեւորգ Քեշիշյանը** խոսել է Պապայանի մասին որպես դաստիարակի, հռետորի եւ ՌԱԿ-ի անդամ: Գլենդեյլի քաղաքապետ **Ֆրենք Քուինտերոն** շնորհավորել է Պապայանին իր մշակութային բազմաբեղուն գործունեության առիթով եւ պատվել նրան «Գնահատանքի հուշատախտակով»:

Ռ. Ա. կուսակցության շնորհավորագիրը կարդացել է **Հակոբ Մարտիրոսյանը**: Ընթերցվել է նաեւ Հյուստոնից (Տեխասից) Սերոբ եւ Մարո Պետրոսյանների (Պապայանի նախկին ուսանողները) նամակը:

Հարգանքի միջոցառումը սկսել եւ ավարտվել է **Հովնան արք. Տերտերյանի** օրհնությամբ: Տեղի է ունեցել նաեւ գեղարվեստական համեստ ծրագիր եւ ընդունելություն:

Թարգմանեց
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
«Արմինյն միրոր սփեքթեյթր»
շաբաթաթերթում Գեւորգ
Քյոշկերյանի հոդվածից

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

# «Անսահման գիծը» կարեւոր է Քնար Գեւորգյանի համար

«Արվեստս հիմնված է զգացմունքների վրա, կյանքից ստացած իմ տպավորությունների վրա: Ներշնչվում եմ ինձ շրջապատող մարդկանց հետ հաղորդակցվելուց», խոստովանել է իր «Սոլեկին» կտավի համար Լոս Անջելեսում 2010 թվի «Ժողովրդի ընտրությունը» մրցանակին արժանացած արվեստագետ **Քնար Գեւորգյանը**, որի նկարների ցուցահանդեսն է բացվել մայիսի 7-ին Լա Կանադայի (Կալիֆոռնիա) Ստեֆանի արվեստների պատկերասրահում:

Հայտնի լրագրող **Ֆլորենս Ավագյանը** գրելով նկարչուհու մասին, նշում է, որ մինչեւ մայիսի 22-ը գործող ցուցահանդեսում ներկայացված են լինելու Գեւորգյանի գրաֆիկական աշխատանքները, 8 յուղաներկեր, եւ եղբոր 7 սյուռռեալիստական կտավները: Ցուցահանդեսը, որն առաջին անհատականն է 1985-ին Երեւանում կայացած ցուցահանդեսից հետո, նվիրված Քնարի վաղամեռիկ եղբորն ու մորը:

Քնար Գեւորգյանը ծնվել է Երեւանում 1960-ին: Նախ հրապուրվել է երաժշտությամբ, սովորել Լեյլի Խաչատուրյանի դասարանում: Ապա զգացել է, որ տարերքն, այնուամենայնիվ, նկարչությունն է եւ ընդունվել մանկավարժական համալսարանի գեղարվեստի բաժինը (1977-1981 թթ.): 1987-ին տեղափոխվել է ԱՄՆ, մոր եւ եղբոր հետ, ամուսնացել եւ երկու դուստր մայր դարձել: 1984-2010-ի ընթացքում նրա կտավները Երեւանում եւ Կալիֆոռնիայում ընդգրկված են եղել մոտ 10 խմբական ցուցահանդեսներում: Բացի վերոնշյալ մրցանակից, 2009-ին իր «Քանդակների աշխարհը» աշխատանքի համար արժանացել է «Պատվո հիշատակության» մրցանակին: Գիծը, որ սահմաններ չունի՝ կարեւոր մասնիկն է Քնարի նկարչության», եզրակացնում է Ֆլորենս Ավագյանը:

Հ. Ծ.

# «Ցեղասպանության որբերը» դառնալու է մեկժամանոց վավերագրական ֆիլմ

Հաշվի առնելով, որ ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 95-ամյակի միջոցառումների շրջանակներում «Հոլիվուդ Ֆլորիդայում» կայացած վերոնշյալ վերնագրով 18 րոպեանոց ֆիլմի առաջին ցուցադրումը մեծ հետաքրքրություն է առաջացրել, քառակի Էմմի մրցանակի արժանացած ֆիլմի ռեժիսոր Պարեստ Մարոնյանը որոշել է այն վերածելու առնվազն մեկժամյա վավերագրական ֆիլմի, տեղեկացնում է այդ առթիվ խմբագրությանը հասցեագրված մամուլի հաղորդագրությունը:

«Հայ որբերի մասին մեր հայտնաբերած տեղեկությունները, որոնք օգտագործել ենք ֆիլմում, հիմնականում պատմում են Բեյրութի (Լիբանան) մոտ գտնվող Անթուրա ավանի որբանոցի մասին, որտեղ մոտ 1000 որբ է ապաստան գտել: Դրա նման բազմաթիվ ուրիշները կան, որոնք նույնքան ցնցող նյութեր են պարունակում: Բայց դրանց գտնվում են տարբեր վայրերում, տարբեր մարդկանց կամ կազմակերպությունների մոտ: Այժմ մենք նոր կայք ենք բացել («armenianophans.com»), որտեղ հույս ունենք իմի բերել այդ տեղեկությունները եւ ընդլայնել ֆիլմի ծավալը», պատմում են «Արմենոիդ թիմի» անդամ պրոդյուսերներ **Պետո Տեր-Պետրոսյանն** ու **Փոլ Անտոնյանը:**

Ֆիլմի նոր տարբերակում նախատեսված է նաեւ բացառիկ մի հարցազրույց բրիտանական «Ինդիփենդենտ» թերթի հայտնի մրցանակակիր լրագրող Ռոբերտ Ֆիսքի հետ, ով հայ որբերի մասին հոդված է գրել իր թերթում, որի թարգմանությունը լույս է տեսել **«Ազգ»**-ում:

Ըստ հաղորդագրության, 150 հազարից ավելի հայ երեխաներ են սրբացել առաջին համաշխարհային պատերազմի եւ ցեղասպանության հետեւանքով: Նրանցից 132 հազարին հոգ է տարել Մ. Նահանգների Կոնգրեսի հովանավորության տակ գործող «Նիըր իսթ Ռիլիֆ» կազմակերպությունը:

«Ցեղասպանության որբերը» ֆիլմի 7 րոպեանոց հոլովակին կարելի է ծանոթանալ «armenoid@comcast.net» կայք մուտք գործելով:

Հ. Ծ.

# «Փյունիկը» հնգակի գավաթակիր

Երեկ «Հանրապետական» մարզադաշտում ՀՀ գավաթը վիճարկեցին «Փյունիկն» ու «Բանանցը»: Ի դեպ, ֆուտբոլի ֆեդերացիան պատրաստել էր նոր գավաթ, այնպես որ թիմերը պայքարում էին նոր մրցանակին առաջինը տիրելու համար: Ինչպես գավաթի նախորդ խաղարկությունում, այս անգամ էլ վճռորոշ խաղում հաջողությունն ուղեկցեց «Փյունիկի» ֆուտբոլիստներին: Սակայն եթե անցյալ տարի այս թիմերի մրցավեճում գավաթի ելքը վճռել էր խաղի ավելացված ժամանակում Հենրիխ Մխիթարյանի խփած միակ գնդակը, ապա այս անգամ սպասված համառ մրցակցությունը չստացվեց: Փյունիկցիները դեռեւս առաջին խաղակեսում ապահովեցին վերջնական հաղթանակը՝ 3 անգամ գրավելով մրցակցի դարպասը: «Փյունիկը» 5-րդ անգամ դարձավ Հայաստանի գավաթակիր՝ այդ ցուցանիշով հավասարվելով պատվավոր մրցանակի խաղարկությունների ռեկորդակիրներ «Արարատին» ու «Միկային»:


ՖՈՏՈԼՈՒՐ

«Բանանցի» ֆուտբոլիստները միայն խաղասկզբում ակտիվ խաղ ցուցադրեցին՝ վտանգավոր մի քանի գրոհներ կազմակերպելով: Սակայն աստիճանաբար «Փյունիկը» տիրեց նախաձեռնությանը ու շուտով բացեց հաշիվը: 13-րդ րոպեին Արթուր Յուզբաշյանի տուգանային հարվածից հետո «Բանանցի» պաշտպանները հետ մղեցին գնդակն ու վրա հասած Դավիթ Մանոյանը գրավեց դարպասը: Բաց թողած գոլից հետո «Բանանցի» խաղը կարծես կազմալուծվեց, իսկ ահա փյունիկցիները ոգեւորված հաջողությունից, գոլային նոր պահեր ստեղծեցին: Հաշիվը կարող էին կրկնապատկել Ալբերտ Թադեւոսյանն ու Մարկոսը, սակայն հաջող խաղաց դարպասապահ Ստեփան Ղազարյանը:

41-րդ րոպեին օգտվելով մրցակցի պաշտպանների անհամաձայնեցված խաղից, Դավիթ Մանոյանը մենմենակ հայտնվեց դարպասապահի դիմաց: Նրա հարվածը հետ մղեց դարպասապահը, գնդակը հայտնվեց Մարկոսի մոտ, որն էլ գրավեց անպաշտպան դարպասը: Իսկ առաջին խաղակեսի ավելացված ժամանակում Մարկոսի տուգանային հարվածից հետո Գեւորգ Ղազարյանը գլխի հարվածով խոցեց դարպասը՝ փաստորեն վճռելով գավաթային մրցավեճի ելքը:

Ընդմիջումից հետո խաղի պատկերը չփոխվեց: «Բանանցը» կարծես հաշտվել էր պարտության մտքի հետ ու այդպես էլ գոլային լուրջ պահ չկարողացավ ստեղծել: Փյունիկցիներն էլ նախկին ակտիվությամբ չէին գործում, լավ հասկանալով, որ գավաթի բախտը վաղուց է վճռված: Այնուամենայնիվ, նրանք եւս մեկ գոլ խփեցին: 70-րդ րոպեին աչքի ընկավ Գեւորգ Ղազարյանը՝ խփելով իր 2-րդ գնդակը: Նա կարող էր նաեւ հեթ տրիկի հեղինակ դառնալ, սակայն չիրացրեց նպաստավոր պահը: Գոլային մեկ հիանալի պահ էլ չիրացրեց փյունիկցի Ալբերտ Թադեւոսյանը:

Այսպիսով, հաղթելով 4-0 հաշվով, «Փյունիկը» 2-րդ տարին անընդմեջ, 5-րդ անգամ նվաճեց պատվավոր մրցանակը: «Փյունիկը» հաղթեց գավաթի խաղարկության բոլոր 5 խաղերում էլ՝ դարպասը թողնելով անառիկ: Նշենք, որ գավաթի եզրափակիչ հանդիպումներում առաջին անգամ գրանցվեց խոշոր հաշիվ: Այս ամենը վկայում է փյունիկցիների հաղթանակի օրինաչափության մասին:

Ի պատիվ փյունիկցիների հաղթանակի, մարզադաշտում հրավառություն տրվեց: ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը նոր գավաթը հանձնեց «Փյունիկի» 37-ամյա ավագ Սարգիս Հովսեփյանին, որը դարձավ ամենատարեց գավաթակիրը: Սակայն ցավոք հեռուստատեսությամբ եզրափակիչ հանդիպմանը հետեւած հանրապետության բազմահազար ֆուտբոլասերները հնարավորություն չունեցան տեսնելու գավաթի հանձնման հանդիսավոր պահը, որի համար ընդամենը մի քանի րոպե էր հարկավոր: Փոխարենը Հ1 հեռուստաալիքով մինչեւ «Հայլուրի» սկսվելը մոտ 10 րոպե գովազդ էր ցուցադրվում: Ճիշտ է, «Հայլուրի» ժամանակ ընդամենը մի քանի վայրկյան եթերում երեւացին ցնծություն ապրող փյունիկցիները, բայց դա ընդհանուր տհաճ զգացումը չփոխեց:

# «Բավարիան» ստանձնեց չեմպիոնական տիտղոսը

Մեկամյա ընդմիջումից հետո Մյունխենի «Բավարիան» իրեն վերադարձրեց Գերմանիայի չեմպիոնի տիտղոսը՝ 23-րդ անգամ արժանանալով ոսկե մեդալների: Ավարտական տուրում մյունխենցիները 3-1 հաշվով հյուրընկալվելիս հաղթեցին բունդեսլիգային հրաժեշտ տված «Հերտային»: 34 հանդիպումներում «Բավարիան» վաստակեց 70 միավոր եւ 5 միավորով առաջ անցավ 2-րդ տեղը զբաղեցրած «Շալկե-04»-ից: Բրոնզե մեդալները բաժին հասան «Վերդերի» ֆուտբոլիստներին: 22 գնդակով առաջնության լավագույն ռմբարկուի տիտղոսը նվաճեց «Վոլֆսբուրգի» հարձակվող Ջեկոն:



Առաջնությունը հասել վերջնագիծը, սակայն «Բավարիայի» համար մրցաշրջանը շարունակվում է: Լուի վան Գալի սաները դեռ երկու վճռորոշ հանդիպում պետք է անցկացնեն: Չեմպիոնների լիգայի եզրափակչում «Բավարիան» մրցելու է իտալական «Ինտերի» հետ, իսկ երկրի գավաթը մյունխենցիները վիճարկելու են «Վերդերի» հետ:

# «Միկան» զիջեց առաջատարի դիրքը

Երկու հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի Հայաստանի առաջնության 7-րդ տուրը: «Իմպուլսը» սեփական հարկի տակ Գեւորգ Նռանյանի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեց «Գանձասարին»: Վերջինս 4-րդ անընդմեջ պարտությունը կրեց:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում տուրի կենտրոնական հանդիպումն «Ուլիսի» եւ «Միկայի» միջեւ: Ցավոք, խաղը չարդարացրեց ֆուտբոլասերների սպասելիքները: Երկու թիմերն էլ չցուցադրեցին իրենց բնորոշ խաղը, գոլային պահերն էլ սակավաթիվ էին: Այդպես էլ այդ անհետաքրքիր խաղում գոլ չգրանցվեց: «Միկան» առաջատարի դիրքը զիջեց «Փյունիկին»: Հիշեցնենք, որ տուրը սկսվել էր «Բանանց»-«Շիրակ» (5-1) եւ «Կիլիկիա»-«Փյունիկ» (0-3) հանդիպումներով:

### Մրցաշարային աղյուսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 7 | 5 | 2 | 0 | 18-4 | 17 |
| 2. Միկա | 7 | 5 | 1 | 1 | 12-4 | 16 |
| 3. Բանանց | 7 | 4 | 2 | 1 | 18-11 | 14 |
| 4. Ուլիս | 7 | 4 | 2 | 1 | 10-3 | 14 |
| 5. Իմպուլս | 7 | 3 | 1 | 3 | 6-10 | 10 |
| 6. Կիլիկիա | 7 | 2 | 0 | 5 | 6-13 | 6 |
| 7. Գանձասար | 7 | 1 | 0 | 6 | 4-15 | 3 |
| 8. Շիրակ | 7 | 0 | 0 | 7 | 3-17 | 0 |

### Ռմբարկուները

| | | |
|---|---|---|
| Սամվել Մելքոնյան | «Բանանց» | 5 |
| Էդուարդո դո Սանթոս | «Բանանց» | 5 |
| Ալբերտ Թադեւոսյան | «Փյունիկ» | 4 |
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 4 |
| Մարկոս Պիզելի | «Փյունիկ» | 4 |

ՇԱԽՄԱՏ

# Տխուր վերջաբան

Նալչիկում անցկացված շախմատի Գրան պրիի մրցաշարի ավարտական տուրն էլ անհաջող դասավորվեց մեր շախմատիստուհիների համար: Լիլիթ Մկրտչյանը սպիտակներով զիջեց մրցաշարի հաղթող Տատյանա Կոսինցեւային, իսկ Էլինա Դանիելյանը պարտվեց Բաիրա Կովանովային:

Դժվար է հիշել մեկ այլ մրցաշար, որում մեր առաջատար շախմատիստուհիներն այսքան անհաջող խաղացած լինեին: Լիլիթ Մկրտչյանը 11 հնարավորից վաստակելով 5 միավոր, գրավեց 9-րդ տեղը: Նա տարավ 3 հաղթանակ, 4 պարտիա ավարտեց ոչ-ոքի, կրեց 4 պարտություն:

Էլինա Դանիելյանը պարզապես տապալվեց: Նա այդպես էլ չճաշակեց հաղթանակի քաղցրությունը, միայն 3 պարտիա ավարտեց ոչ-ոքի ու 1,5 միավորով եզրափակեց աղյուսակը:

Գերազանց հանդես եկավ ռուսաստանցի Տատյանա Կոսինցեւան, որը շատ բարձր արդյունք ցույց տվեց՝ 11 պարտիաներում վաստակելով 9 միավոր: Նա մրցաշարի միակ մասնակիցն էր, որ պարտություն չկրեց: Նա 1,5 միավորով առաջ անցավ 2-րդ տեղը զբաղեցրած Հոու Յիֆանից: Հաջորդ տեղերը գրավեցին Նանա Ձագնիձեն, Պիա Կրամլինգը՝ 7-ական միավոր, Համփի Կոներուն, Բաթխույագ Մոնգոնտույլն ու Ժու Չենը՝ 5,5-ական, Բաիրա Կովանովան, Ժաո Քսյուն՝ 5-ական, Բեթյուլ Յիլդիզը՝ 2,5:

# Աբրահամ-Ֆրոչ մենամարտը կկայանա սեպտեմբերին

Երկրորդ միջին քաշային կարգի 6 ուժեղագույն բռնցքամարտիկների մրցաշարում Արթուր Աբրահամի եւ Կարլ Ֆրոչի մենամարտը օգոստոսից տեղափոխվել է սեպտեմբեր: Դա պայմանավորված է այն բանով, որ Ֆրոչին ժամանակ է անհրաժեշտ Միկել Կեսլերի հետ մենամարտում ստացած վնասվածքից ապաքինվելու համար:

Առայժմ մենամարտի անցկացման վայրն անհայտ է: Մրցակիցներին չի հաջողվում համաձայնության գալ այդ հարցում: Նախապես որոշված էր մենամարտն անցկացնել Գերմանիայում, սակայն Ֆրոչը սպառնացել էր դուրս գալ մրցաշարից, եթե հանդիպման վայրը չփոխվի: Նա ցանկանում է մենամարտել իր հայրենի Նոթինգհեմում: Աբրահամի ներկայացուցիչները պատրաստ են ընդառաջել բրիտանացուն՝ առաջարկելով մենամարտել չեզոք երկրում, օրինակ՝ Շվեյցարիայում: Սակայն բրիտանական լրատվամիջոցների տեղեկացմամբ Ֆրոչը դժվար թե համաձայնվի:

# Հավասարակշռությունը պահպանվեց




Վիշվանաթան Անանդի եւ Վեսելին Թոփալովի մրցախաղի հերթական՝ 10-րդ եւ 11-րդ պարտիաներն էլ առավելություն չտվեցին մրցակիցներից որեւէ մեկին: Գրանցվեցին ոչ-ոքի արդյունքներ: Այսպիսով, այսօր կայանալիք ավարտական պարտիայից առաջ մրցախաղի հաշիվը հավասար է՝ 5,5-5,5:

Եթե 12-րդ պարտիան էլ խաղաղ ելք ունենա, ապա մայիսի 13-ին կանցկացվի արագ շախմատի մրցաշար 4 պարտիայից: Հավասար արդյունքի դեպքում կանցկացվի 2 պարտիայից բաղկացած կայծակնային մրցախաղ: Առավելագույնը կարող է անցկացվել կայծակնային 10 պարտիա, որից հետո հավասար արդյունքի դեպքում կկայանա վճռորոշ մրցախաղը: Այդ պարտիայում սպիտակներին կտրվի 5 րոպե, սեւերին՝ 4: Ոչ-ոքի արդյունքի դեպքում հաղթող կճանաչվի սեւերով խաղացող շախմատիստը:

# Ուժերի ստուգատես իրանցիների հետ

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը Երեւանում ընկերական 2 խաղ անցկացրեց Իրանի իր հասակակիցների հետ: Առաջին խաղում գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: Առաջինը հաջողության հասան հյուրերը: Աչքի ընկավ Հադի Դենդաղին: 76-րդ րոպեին տուգանայինի խաղարկումից հետո Վարազդատ Հարոյանը գլխի հարվածով վերականգնեց հավասարակշռությունը:

Թիմերի 2-րդ մրցավեճում իրանցի ֆուտբոլիստները հաղթեցին 3-0 հաշվով:

# Պետրոսյանը հետապնդում է առաջատարներին

Սարաեւոյի շախմատի մրցաշարում 5 տուրից հետո Դավիթ Պետրոսյանը 3,5 միավորով հետապնդում է առաջատարներին: Մեկնարկում 2 անընդմեջ հաղթանակներից հետո Դավիթը ոչ-ոքի խաղաց Նարայանան Գոպալի հետ, ապա պարտվեց Անտե Բրկիչին, իսկ 5-րդ տուրում հաղթեց Ջելչկո Գալիչին: Աղասի Ինանցը վաստակել է 1,5 միավոր:

Աղյուսակը 4,5-ական միավորով գլխավորում են Արտյոմ Տիմոֆեեւը, Յան Գուստաֆսոնը, Անտե Բրկիչը, Դմիտրի Սվետուշկինը եւ Դավիթ Բերգեսը:

# Երկու տուրում մեկ միավոր

Իտալական Սալոու քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ եւ 5-րդ տուրերում Կարեն Մովսիսյանը պարտվեց Վիկտոր Մոսկալենկոյին եւ հաղթեց Գյունտեր Դելեյնին: 5 տուրից հետո Մովսիսյանը 3,5 միավորով 17-րդ տեղում է: Մրցաշարում երկիշխանություն է: 4,5-ական միավորով առաջատարներն են ուկրաինացի Սերգեյ Ֆեդորչուկն ու կուբացի Օմար Ալմեյդան:

*էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 10/05/2010 21:58 Page 1



ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Տարբերություն կա՞ կուսակցական կամ անկուսակցական հովանավորյալների միջեւ

Երեկ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ **Մանվել Բադալյանը** լրագրողների հետ հանդիպման ժամանակ մի լավ բողոքել է, թե որակյալ հանրային ծառայություն չունենք ու չենք ունենա, քանի դեռ որակյալ հանրային ծառայողներ չունենք: Եվ ասել է այնպիսի բարձր մտքեր, որը լսողն անպայման մի թեթեւ գոնե ժպտում է՝ իմանալով իրականությունը. թե՝ մենք կերտում ենք մեր պետությունը, եւ յուրաքանչյուր պաշտոնատար անձ պետք է պետական շինարարության հրամայականը վեր դասի իր նեղ անձնական, խմբակային, կուսակցական ամեն տիպի շահից: Մինչդեռ ահա կուսակցական կոալիցիայի անդամ կուսակցությունների ղեկավարներն ու պաշտոնական անձինք մշտապես դիմում են Մանվել Բադալյանին՝ կուսակիցներին եւ ընկերներին տեղավորելու համար, ընդ որում՝ սեփական կուսակցությունների ղեկավարների հանձնարարությամբ են դիմում: Այս անգամ անուններ չի նշել՝ խոստանալով հետագայում հետեւողականորեն մասնացույց անել այդ կուսակցականներին եւ պաշտոնյաներին:

Դե, զանգել-միջնորդել հայերը միշտ էլ սիրում են, ըստ Բադալյանի, բայց պետք է նվազագույն կանոնները գոնե պահպանել, որ չվնասեն համակարգին: Հիշեցնենք, որ անցած հինգշաբթի Մանվել Բադալյանը կառավարության նիստի ժամանակ էր բարձրաձայնել այդ մասին՝ նկատելով, որ կուսակցությունները դառնում են աշխատանքի բորսաներ, վարչապետն էլ արձագանքել էր, թե վստահ է, որ Բադալյանն իր հեղինակությունն օգտագործելով՝ թույլ չի տա, որ միջամտեն: Իսկ ահա երեկ էլ Մ. Բադալյանն ասում էր, որ չեն վախենում կառավարության նիստին հաջորդող արձագանքներից, ուղղակի մտահոգված են, որ այս կամ այն կուսակցությունը գերակա է համարում իր շահը, ինչը Մանվել Բադալյանի համար անընդունելի է. «Ինձ համար կան նշաձողեր, որ ամենահարազատի համար չեմ զոհի», հավաստիացրել է պարոն Բադալյանը եւ առաջարկել օրենքով սահմանել, որ պետական ծառայողները չպետք է լինեն կուսակցական, դրանից պետական ծառայության համակարգը կլավանա:

Իհարկե, Բադալյանը հավաստիացրել է, որ նորմատիվ ակտերով քաղծառայության խորհուրդը պաշտպանված է, ազատության եւ անկախության չափն էլ բավարար է, չնայած կառավարության նիստից հետո նրան զանգահարել են պարզելու, թե ո՞ւմ է նկատի ունեցել:

Սակայն այս բոլորը մի այլ տեսանկյունից դիտարկելու խնդիր կա: Հայոց անկախացումից ի վեր խորհրդարանի ընտրությունների կարգն անընդհատ փոխվում է՝ հօգուտ կուսակցական համակարգի. ներկա Ազգային ժողովի 131 պատգամավորից 90-ը կուսակցական ցուցակներով է անցել Ազգային ժողով: Խորհրդարանում գործում է կոալիցիա, որը կուսակցական քվոտաներով կառավարություն է կազմում, դեռ տարբեր ծրագրեր կան, որ էլի ուզում են պատգամավորների մուտքը խորհրդարան կուսակցական ցուցակներով ավելի մեծ տոկոսով լինի: Այս սկզբունքն ու քաղծառայողների ինստիտուտը՝ մաքուր գաղափարի առումով արդեն հակասության մեջ են, քանի որ մի երկրում, որտեղ ռեալիզացվելու համար արդեն իսկ օրենքով պետք է կուսակցական լինես, ավելի շուտ՝ իշխող կուսակցության մաս կազմես, ի՞նչ քաղծառության օրենք, ի՞նչ բան: Արդյո՞ք մի տեղի համար հավասար միավորներ հավաքած 6 հոգուց կուսակցականը չի ընտրվի տվյալ նախարարության կողմից (այսպես անվնաս տարբերակն ենք շեշտում, բայց մնացած տարբերակները կյանքում էլ ավելի անխիղճ են), ու այստեղ քաղծառայության Մ. Բադալյանն ինչ կարող է անել: Կամ մի երկրում, որտեղ կուսակցական լիդերը երբ ուզի եւ ում ուզի կարող է փոխել՝ իր քվոտայով նախարարից սկսած, եւ դրան ոչ ոք չի հակադրվում, դեռ լրագրողի հարցին ի պատասխան էլ, որ հասարակությունը պետք է իմանա, ինչո՞ւ է նախարար փոխվում, վերեւներից պատասխան է հնչում, թե մեզ մոտ կոալիցիոն կարգ է գործում, կոալիցիան է որոշում՝ ում նախարար դարձնի (դե՝ կուսակցության լիդերն, էլի), եւ այդ պատասխանը ոչ ոք չի վիճարկում: Ասենք նախարարը փոխվեց՝ տվյալ նախարարության մի քանի առանցքային պետերը փոխվում են հավատարիմներով, եւ այստեղ ոչ մի քաղծառայության օրենք չի կարող պաշտպանել նախկին նախարարի կադրին, «իր դիմումի համաձայնը», կամ «առողջական խնդիրներովը» միշտ կա ու կա:

Ուրիշ բան, որ Բադալյանին ինչ-որ շրջանակներից կարող են հուշել կոալիցիային զսպող այդպիսի հայտարարություններ անել, չնայած Մ. Բադալյանը երեկ կտրականապես հերքում էր դա՝ ի՛ր նախաձեռնությունն է, որեւէ մեկի կողմից հավանության արժանացած ու թելադրված չէ. «Դա բխում է պետական քաղաքականության ուղեգծից: Ոչ մեկի հետ չեմ համաձայնեցրել: Կարգավիճակս, բնավորությունս ու պատասխանատվությունս, կրածս բեռը բավարար են այս կարգի նախաձեռնությունների համար», ասել էր՝ նկատի ունենալով երեւի նաեւ, որ մինչեւ 2014 թվականը պաշտոնավարելու է արդեն իսկ իր նշանակման ժամկետով («իր դիմումի համաձա՞յնը» բա):

Այնուամենայնիվ՝ հակված ենք կարծելու, որ Մ. Բադալյանի վերջին ակտիվությունը արձագանքն է տարբեր գրասենյակներում հղացվող այն ծրագրերի, որոնցով առաջիկայում փորձ է արվելու նվազեցնել կոալիցիայի դերը պետական ամենատարբեր որոշումների կայացման վրա ընդհանրապես, կենցաղային ու վարչական մակարդակով՝ մասնավորապես, որովհետեւ տարբեր մակարդակներով վերջերս հաճախ են սկսել պտտվել այն խոսակցությունները, թե կոալիցիայի այս՝ տարբեր սերտաճումներով ծանրացած եւ անկենսունակ դարձած փոխակերպումները, պաշտոնների եւ ռեսուրսների վրա մշտական աչք տնկած ոչ միայն կուսակցականներով, այլեւ մերձկուսակցական բազմաթիվ մարդկանցով, իրականում խանգարում են հասարակության զարգացմանը, նոր եւ տաղանդավոր, ոչ մի կուսակցության չհարած մարդկանց հայտնաբերմանն ու նրանց ներուժի օգտագործմանը: Բայց այստեղ մի մեծ հակասություն կա: Այսպիսի բաները չպետք է հրահանգներով լինեն: Այսքան կառույցներ ունենք՝ Ազգային անվտանգության խորհուրդ, Հանրային խորհուրդ, պառլամենտ, գիտությունների ակադեմիա, զանազան ռազմավարական կենտրոններ. ասելս այն է, որ նախ որոշենք՝ ի՞նչ է մեզ պետք, այդ որոշածին օրենքի ուժ տանք, օրենքը ներդնենք կյանք, օրենքի թիվ մեկ ներդրումը համարենք նորմալ ընտրությունների կազմակերպումը, հետո արդեն՝ մյուս քայլերը: Թե չէ՝ ի՞նչ է դուրս գալիս, մեկ որոշում ենք, որ ամեն ինչ կուսակցական համակարգերով ենք կարգավորում, երկրի նախագահն ու վարչապետը, խորհրդարանի ղեկավարը կուսակցականներ են, հետո էլ ուզում ենք, որ կուսակցությունները աշխատանքի բորսա չդառնան, քաղծառայության օրենքն էլ լիարժեք գործի: Է, ի՞նչ տարբերություն, եթե հայերիս մեջ նստած է ծանոթով, կաշառքով պաշտոն ու աշխատանք ստանալը, ի՞նչ տարբերություն՝ դա կանի կուսակցակա՞ն, թե՞ անկուսակցական պաշտոնյան: Քաղծառայության խորհրդի մասին էլ չենք համարձակվում ասել:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ




# ԹԱՅՄԱՌԻԿ ՀԱՄԵՐԳ ԵՐԵՎԱՆՈՒՄ

## «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ի հերթական աջակցությունը երաժիշտներին

«Յունիբանկ»-ի նախաձեռնությամբ եւ ֆինանսական աջակցությամբ Երեւանում կանցկացվի դասական երաժշտության համերգաշար: Բեմում միասին ելույթ կունենան Հայաստանի եւ արտերկրի բարձրակարգ երաժիշտներ: Համերգների նպատակը հայ հանդիսատեսին տաղանդավոր երաժիշտների ներկայացումն ու երիտասարդության շրջանում դասական երաժշտության հանրայնացումն է:

Մայիսի 15-ին Ա.Սպենդիարյանի անվան Ազգային Օպերայի եւ Բալետի թատրոնում կայանալիք համերգին առաջին անգամ Հայաստանում կներկայացվեն կոմպոզիտոր Գարի Քյոսայանի հեղինակային ստեղծագործությունները սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Երեկոյի ընթացքում կհնչեն ջազ եւ դասական ոճով գրված ստեղծագործութուններ, այդ թվում՝ հանդիսատեսին արդեն քաջածանոթ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի բեմականացման համար գրված սիմֆոնիկ ստեղծագործությունը: Կոմպոզիտորի հետ միասին հանդես կգա Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը՝ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ: Համերգին երիտասարդ երաժիշտների ընդգրկումը պատահական չէ: Այդ կերպ բանկը տաղանդավոր երիտասարդ երաժիշտներին մեկ անգամ եւս հանդիսատեսին ներկայանալու եւ ստեղծագործական առումով հետաքրքրական նախագծում մասնակցելու հնարավորություն է ընձեռում: Համերգի հատուկ հյուրն է ամերիկյան հանրահայտ ջազ երգչուհի Ինդեան, ով ջազի իր կենդանի կատարումներով արդեն գերել է հայ երաժշտասեր հասարակությանը:

Գարի Քյոսայանի առաջին՝ «Քեզ համար», ալբոմը 1998 թվականին թողարկվելով ԱՄՆ-ում, դարձել է տարվա լավագույն ջազային ալբոմը, իսկ ինքը՝ կոմպոզիտորը, ճանաչվել ԱՄՆ-ի լավագույն ջազ երաժիշտը: Ամերիկյան «Լոս Անջելես Թայմս» թերթը նշել է, որ Գարի Քյոսայանի երաժշտությունը թարմ շունչ է ջազային երաժշտության մեջ: Նրա երաժշտությունը ունկնդրին ուղեկցում է դեպի գեղեցիկը եւ հավերժը՝ միշտ մնալով թարմ եւ նորաշունչ:

**EUROPEAN UNION ADVISORY GROUP TO THE REPUBLIC OF ARMENIA**

## TRAINEESHIP PROGRAMME ANNOUNCEMENT

The European Union Advisory Group to the Republic of Armenia (EU AG) is offering a few traineeships for young Armenian citizens who have recently graduated from university to work with individual Advisors of the EU AG and/or Ministries in the fields of Good Governance and Sustainable Economic Development.

Possible areas of work include: human rights; anticorruption policy and measures; civil service reform; activities related to justice, freedom and security; legal approximation in a variety of fields; customs issues; preparations for trade negotiations; technical barriers to trade; sanitary and phyto-sanitary regulations; intellectual property rights; public debt issues; parliamentary proceedings; communications; public awareness campaigns; assistance to the Diplomatic School; organizational issues; and others.

The duration of the traineeship will normally be one year. Trainees will receive a monthly contribution to their living expenses in Armenian Dram not exceeding the entry salary level of a civil servant working at an Armenian Ministry. At the end of the trainee period, trainees may have the opportunity to enter the public service.

The selection of trainees will be based on the results obtained in their university degree, their field of expertise, their proficiency in the English language, knowledge of EU structures and policies, written tests and a personal interview. A Selection Committee composed of representatives of the Armenian Government, the UNDP, the EU Delegation and the EU AG, will conduct the selection process.

Armenian citizens who are recent university graduates with a Master Degree in economics, business administration, finance, law, political science, sociology, agriculture, agro-economics, physics, chemistry, biology or related fields are invited to submit their applications electronically through http://www.undp.am/traineeship website in English, by completing Traineeship Form and including a detailed curriculum vitae and photocopies of their degrees. No hard copy application will be accepted. Applications deadline is 31 May 2010. Only short listed candidates will be contacted.

The EU AG is a project fully funded by the European Union

The UNDP is the implementation partner of the EU AG

# Ամերիկյան դեսպանատունը կազմակերպում է

գրասենյակային ու բնակարանային կահույքի, մեքենաների, համակարգիչների և այլ ապրանքների աճուրդային վաճառք, որը տեղի կունենա մայիսի 22-ին Ամերիկյան փողոց 1 հասցեում ժամը 10-19: Ապրանքները կարող եք զննել տեղում վաճառքին նախորդող ուրբաթ օրը, մայիսի 21-ին ժամը 10-19: Զննումն անվճար է:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժինը:

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 10.05.2010 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 388.53 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 506.64 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 13.05 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 217.52 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 10.05.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: